


Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Մ Է

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա»
հասարակական կազմակերպության 22-րդ հերթական ժողովի
28.06.2022թ. որոշմամբ

Նախագահ՝

Ա. Մելիքբեկյան



Կազմված է 29.06.2022թ., բաղկացած է 2 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Մ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ 02.10.2018թ.
Գրանցման համար՝ 211.171.1039517
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 02566915

30.07.2021թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից 28.07.2022 թ.



**ԿԱՆՈՆԱՂՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն և լրացում)**

**«Հայաստանի Ֆուտբոլի
Ֆեդերացիա»**

Հասարակական կազմակերպության

APPROVED

by the decision of the 18th Ordinary Assembly
of "Football Federation of Armenia"
non-governmental organization
made on June 29, 2022

President

A.Melikbekyan



Drafted on June 29, 2022 on 1 pages
Published in total 2 copies
Copy 2p

REGISTERED

BY THE AGENCY OF STATE REGISTER
OF LEGAL ENTITIES OF THE
REPUBLIC OF ARMENIA ON 02.10.2018

Registration number: 211.171.1039517
Tax code: 02566915

Amendment N ____ to the statutes as of
30.07.2021 was registered by the Agency State Register
of Legal Entities on _____

_____ / _____

**STATUTES
(amendment)**

“Football Federation of Armenia”

Non-governmental organization

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Մ Է

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական
կազմակերպության 21-րդ հերթական ժողովի
28.06.2021թ. որոշմամբ

A P P R O V E D

by the decision of the 21st Ordinary Assembly
of Football Federation of Armenia
non-governmental organization
made on June 28, 2021

Նախագահ՝
Ա. Մելիքբեկյան

President
A. Melikbekyan

Կազմված է 28.06.2021թ., բաղկացած է 59 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

Drafted on June 28, 2021 on 59 pages
Published in total 2 copies
Copy 1

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Մ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ 02.10.2018թ.
Գրանցման համար՝ 211.171.1039517
Հարկ վճարողի հաշվառման համար՝ 02566915

R E G I S T E R E D
BY THE AGENCY OF STATE REGISTER
OF LEGAL ENTITIES OF THE
REPUBLIC OF ARMENIA ON October 2, 2018

Registration number: 211.171.1039517
Tax code: 02566915

11.11.2019թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից _____ 2021թ.

Amendment N _____ to the statutes as of
November 11, 2019 was registered by the Agency State
Register of Legal Entities on _____, 2021

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(նոր խմբագրությամբ)**

**STATUTES
(new edition)**

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա»

Football Federation of Armenia

Հասարակական կազմակերպության

non-governmental organization

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Ստորև բերված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

ՀՖՖ՝ «Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն (այսուհետ՝ «ՀՖՖ»), որը ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի անդամ Ասոցիացիա է:

ՖԻՖԱ՝ Ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա:

Ժողով՝ ՀՖՖ-ի բարձրագույն և իրավաստեղծ մարմին:

Ասոցիացիա՝ ՖԻՖԱ-ի կողմից որպես այդպիսին ճանաչված ֆուտբոլի Ասոցիացիա: Այն ՖԻՖԱ-ի անդամ է, եթե համատեքստից այլ իմաստ չի բխում:

Ասոցիացիոն ֆուտբոլ՝ ՖԻՖԱ-ի կողմից վերահսկվող և ՖԻՖԱ-ի, Կոնֆեդերացիաների և/կամ Ասոցիացիաների կողմից կազմակերպվող խաղ, որն անցկացվում է Խաղի կանոններին համաձայն:

ԿԱՍ՝ Լոզանում (Շվեյցարիա) գործող Սպորտային արբիտրաժային դատարան:

Ակումբ՝ ՖԻՖԱ-ի անդամ հանդիսացող Ասոցիացիայի անդամ կամ Ասոցիացիայի կողմից ճանաչված և դրա ենթակայության տակ գործող որևէ Լիգայի (եթե այդպիսին կա) անդամ, որն առաջնությունում ունի առնվազն մեկ թիմ:

Կոնֆեդերացիա՝ նույն մայրցամաքում (կամ միացյալ աշխարհագրական գոտում) գտնվող Ասոցիացիաների խումբ, որը ճանաչված է ՖԻՖԱ-ի կողմից:

Պատվիրակ՝ ֆիզիկական անձ, որը լիազորված է Ժողովին ներկայացնելու որևէ Անդամի:

Գործադիր կոմիտե՝ ՀՖՖ-ի գործադիր մարմին:

ԻՖԱԲ՝ Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ:

Խաղի կանոններ՝ ՖԻՖԱ-ի կանոնադրության համաձայն ԻՖԱԲ-ի կողմից հրապարակված Ասոցիացիոն ֆուտբոլի կանոններ:

Լիգա՝ կազմակերպություն, որը ենթակա է Ասոցիացիային:

DEFINITIONS

The terms given below denote the following:

FFA: Football Federation of Armenia non-governmental organization (hereinafter referred to as “FFA”) that is a member Association of FIFA and of UEFA.

FIFA: Fédération Internationale de Football Association.

Assembly: the supreme, and legislative body of FFA.

Association: a football association recognised as such by FIFA. It is a member of FIFA, unless a different meaning is evident from the context.

Association football: the game controlled by FIFA and organised by FIFA, the Confederations and/or the Associations in accordance with the Laws of the Game.

CAS: Court of Arbitration for Sport based in Lausanne (Switzerland).

Club: a member of an Association (that is a member of FIFA) or a member of a League (if there is one) subordinate to and recognised by an Association that enters at least one team in a competition.

Confederation: a group of Associations recognised by FIFA that belong to the same continent (or assimilable geographic region).

Delegate: a natural person validly representing a Member at the Assembly.

Executive Committee: the executive body of FFA.

IFAB: The International Football Association Board.

Laws of the Game: the laws of Association football issued by the IFAB in accordance with the FIFA Statutes.

League: an organization that is subordinate to an Association.

Անդամ՝ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձ, որը ժողովի որոշմամբ ստացել է ՀՖՖ-ի անդամություն:

Պաշտոնատար անձ՝ Խորհրդի անդամ (ներառյալ Գործադիր կոմիտեի անդամները), կոմիտեի անդամ, մրցավար կամ մրցավարի օգնական, մարզիչ, հրահանգիչ կամ ՖԻՖԱ-ում, որևէ Կոնֆեդերացիայում, Ասոցիացիայում, Լիգայում կամ Ակումբում տեխնիկական, բժշկական կամ վարչական հարցերի համար պատասխանատու ցանկացած անձ, ինչպես նաև ՖԻՖԱ-ի Կանոնադրության ներքո գործող ցանկացած այլ անձ (բացառությամբ խաղացողների և միջնորդների):

Դատարաններ՝ պետական դատարաններ, որոնք քննում են հանրային կամ մասնավոր իրավական վեճեր:

Խաղացող՝ որևէ Ասոցիացիայում գրանցված ֆուտբոլիստ:

Մարզային ասոցիացիա՝ Ասոցիացիայի ենթակայությամբ գործող կազմակերպություն:

ՈՒԵՖԱ՝ Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միություն:

ՎԱԴԱ՝ համաշխարհային հակադոպինգային գործակալություն:

Նշում. ֆիզիկական անձ մատնանշող բոլոր հասկացությունները վերաբերում են երկու սեռերին: Եզակիով դրված ցանկացած հասկացություն իմաստով վերագրելի է նույն հասկացության հոգնակիին և հակառակը:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կազմակերպարավական ձևը, հասցեն և ապրանքանիշերը

¹ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը ինքնաֆինանսավորվող, ինքնակառավարվող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից, Երևան քաղաքում:

Member: a legal person registered in the Republic of Armenia that has been admitted into membership of FFA by the Assembly.

Official: any board member (including the members of the Executive Committee), committee member, referee and assistant referee, coach, trainer and any other person responsible for technical, medical and administrative matters in FIFA, a Confederation, an Association, a League or a Club as well as any other persons obliged to comply with the FIFA Statutes (except players and intermediaries).

Ordinary Courts: state courts which hear public and private legal disputes.

Player: a football player registered with an Association.

Regional Association: an organization that is subordinate to an Association.

UEFA: Union des Associations Européennes de Football

WADA: World Anti-Doping Agency.

NB: Terms referring to natural persons include both genders. Any term in the singular applies to the plural and vice-versa.

I. GENERAL PROVISIONS

1. Legal form, headquarters, obligations and trademarks

¹ The Football Federation of Armenia non-governmental organization is a self-financing, self-governing, non-profit (non-commercial) organization, which is registered in the City of Yerevan by the Agency of State Register of Legal Entities with the Ministry of Justice of the Republic of Armenia under the legislation of the Republic of Armenia.

ՀՖՖ-ն ստեղծվել է օրենքի պահանջին համապատասխան «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է վերջինիս գույքի, իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը փոխանցման ակտին համաձայն՝ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության գործունեության դադարման և ՀՖՖ-ի պետական գրանցման պահից:

² ՀՖՖ-ի Գլխավոր գրասենյակը (գտնվելու վայրը) գտնվում է Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Խանջյան փողոց 27 հասցեում և կարող է տեղափոխվել այլ վայր միայն Ժողովի համապատասխան որոշմամբ:

³ Հանդիսանալով ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի անդամ՝ ՀՖՖ-ն պարտավորվում է.

ա) ՀՀ օրենսդրության շրջանակներում մշտապես համապատասխանել ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների, կանոնակարգերի, կարգադրությունների պահանջներին, կատարել ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի, ԿԱՍ-ի որոշումները, պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները, ՀՖՖ-ի կանոնադրությունը և ՀՖՖ-ի համար պարտադիր համարվող այլ օրենքների և կարգավորումների պահանջները,

բ) ակտիվորեն մասնակցել ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի սպորտային միջոցառումներին,

գ) առաջնորդվել արդարության, բարեվարքության և մարզական էթիկայի սկզբունքներով՝ որպես արդար խաղի դրսևորում,

դ) պահպանել ԻՖԱԲ-ի կողմից սահմանված Խաղի կանոնները, ինչպես նաև ՖԻՖԱ-ի կողմից սահմանված ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի Խաղի կանոնները,

ե) ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ կանոնադրությունների համապատասխան դրույթներով սահմանված կարգով ճանաչել Սպորտային արբիտրաժային դատարանի իրավասությունը,

զ) ծավալել երրորդ անձանց ոչ պատշաճ միջամտությունից զերծ անկախ գործունեություն, ապահովել ընթացակարգ, որը երաշխավորում է ՀՖՖ մարմինների անդամների ընտրությունների կամ նշանակումների լիակատար անկախությունը, մասնավորապես այնպիսի ընթացակարգ, որը կբացառի որևէ քաղաքական ոչ պատշաճ միջամտություն կամ ազդեցություն,

FFA is established pursuant to the law and due to and as a result of reorganization of “Football Federation of Armenia” union of legal entities. FFA is the legal successor of the latter, including its assets, rights and liabilities as specified under the transfer act and from the moment of the state registration of the termination of activities of “Football Federation of Armenia” union of legal entities.

² The headquarters of FFA are located at 27 Khanjyan Street, Yerevan, Republic of Armenia and may only be transferred to another location following a resolution passed by the Assembly.

³ FFA is a member of FIFA and of UEFA. Therefore, FFA undertakes:

a) within the limits of Armenian legislation to comply at all times with the statutes, regulations, directives and decisions of FIFA and UEFA, decisions of CAS as well as the law of the Republic of Armenia, FFA Statutes and other laws and regulations binding on FFA;

b) to take an active role in the sporting activities of FIFA and UEFA;

c) to observe the principles of loyalty, integrity and sportsmanship in the spirit of fair play;

d) to respect the Laws of the Game as approved by The IFAB as well as the Futsal and Beach Soccer Laws of the Game as issued by FIFA;

e) to recognise the jurisdiction of CAS, as specified in the relevant provisions of the FIFA, UEFA and FFA Statutes;

f) to manage its affairs independently and ensure that its own affairs are not unduly influenced by any third parties and to provide for a procedure that guarantees the complete independence of elections or appointments of members of FFA bodies in particular a procedure which is independent of any undue political interference or influence;

է) գործունեության ընթացքում պահպանել հակադոպինգային կոնվենցիաների և կիրառելի օրենսդրության այլ դրույթների պահանջները,
ը) ապահովել Անդամների, Լիգաների, Ակումբների, Խաղացողների, Պաշտոնյաների, Խաղերի միջնորդների և գործակալների կողմից վերոնշյալ պահանջների կատարումը՝ վերջիններիս կանոնադրության մեջ, արտոնագրման, գրանցման կամ որևէ այլ գրավոր փաստաթղթում ամրագրելու միջոցով, և
թ) ՖԻՖԱ-ին և ՈՒԵՖԱ-ին տեղեկացնել ՀՖՖ կանոնադրության ցանկացած փոփոխության մասին՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով նշված փոփոխությունների թարգմանությունը ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի պաշտոնական լեզվով:

⁴ ՀՖՖ-ի անվանումն է.

ա) Հայերեն լրիվ անվանումն է՝
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

բ) Հայերեն կրճատ՝
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ

գ) Հայերեն հապավումը՝ «ՀՖՖ» ՀԿ

դ) Անգլերեն լրիվ՝
“Football Federation of Armenia” non-governmental organization

ե) Անգլերեն կրճատ՝
“Football Federation of Armenia” NGO

զ) Անգլերեն հապավումը՝ “FFA” NGO

⁵ ՀՖՖ-ի դրոշմը սպիտակ միագույն ուղղանկյունաձև կտրվածքով է, կենտրոնում՝ ՀՖՖ-ի խորհրդանիշը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերակցությունն է՝ 1:2:

⁶ ՀՖՖ-ի խորհրդանիշը կարմիր, կապույտ և նարնջագույն գույների համադրմամբ շրջան է, որի ստորին նարնջագույն հատվածում՝ արտաքին մասում, հայերեն տառերով գրված է «ՀՖՖ»: Վերևում՝ շրջանի ձախից աջ հատվածում, կարմիր ֆոնին սպիտակ գույնի անգլերեն մեծատառերով շրջանաձև գրված է «Football Federation of Armenia»: Շրջանի ստորին մասում՝ դրա մեջտեղում, Արարատ լեռն է, որի գագաթներից վերև պատկերված է ֆուտբոլի գնդակ:

g) to act in a manner that is consistent with anti-doping conventions and other provisions of applicable legislation;

h) to ensure that its Members, Leagues, Clubs, Players, Officials, intermediaries and match agents agree – through their own statutes, license, registration or any other written document – to respect the abovementioned obligations; and

i) to communicate to FIFA and UEFA any amendment of the FFA Statutes translated, if necessary, into an official language of FIFA and UEFA.

⁴ The name of the FFA is:

a) Full name in Armenian:
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

b) Abbreviated name in Armenian:
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ

c) Acronym in Armenian: «ՀՖՖ» ՀԿ

d) Full name in English:
“Football Federation of Armenia” non-governmental organization

e) Abbreviated name in English:
“Football Federation of Armenia” NGO

f) Acronym in English: “FFA” NGO

⁵ The flag of FFA is of rectangular white background with the FFA symbol in the centre. The height to width ratio of the flag is 1:2.

⁶ The symbol of FFA is a round circle blended with red, blue and orange colours, with the Armenian letters “ՀՖՖ” written below of the orange section, in the outer part. Above – from left to right the circle is surrounded by an English inscription “Football Federation of Armenia” made in white capital letters on red background, in the lower part inside the circle is mountain Ararat, with a football over the summits.

⁷ ՀՖՖ-ի խորհրդանիշը (ապրանքային նշանը) գրանցված է ՀՀ Ստավոր Սեփականության գործակալության կողմից:

⁸ ՀՖՖ-ն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություններ կամ դառնալ նրանց մասնակից/բաժնետեր:

2. Նպատակները

ՀՖՖ-ի նպատակներն են.

ա) շարունակաբար զարգացնել ֆուտբոլ խաղը, խթանել, կանոնակարգել և վերահսկել այն ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող ողջ տարածքում՝ արդար խաղի և դրա միավորող, կրթական, մշակութային և մարդասիրական արժեքների լույսի ներքո՝ դա իրականացնելով մասնավորապես երիտասարդական, մանկապատանեկան և զարգացման ծրագրերի միջոցով.

բ) կազմակերպել ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի ազգային առաջնություններ՝ հստակ սահմանելով տարբեր Լիգաներին (եթե այդպիսիք կան) տրված իրավասությունների շրջանակը.

գ) կազմել կանոնակարգեր և կանոններ և ապահովել դրանց կիրառումը.

դ) պաշտպանել իր Անդամների շահերը.

ե) հարգել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությունները, կանոնակարգերը, կարգադրությունները և որոշումները և կանխել դրանց, ինչպես նաև Խաղի կանոնների որևէ խախտում և ապահովել Անդամների, Լիգաների, Մարզային ասոցիացիաների, Ակումբների, Խաղացողների, Պաշտոնյաների, խաղերի գործակալների և միջնորդների կողմից այդ կանոնների պահպանումը.

զ) խթանել բարեխիղճ կառավարումը, բարեվարքությունը, էթիկան և արդար խաղի կանոնները՝ նպատակ հետապնդելով կանխարգելելու խախտումների բոլոր մեթոդներն ու գործողությունները,

⁷ FFA symbol (trademark) is registered with Intellectual Property Agency of Armenia.

⁸ FFA is entitled to engage in business activities to achieve the goals set out in the Statutes and, for those purposes, to dispose of its property and outcomes of its activities, establish or acquire membership/shareholding in business entities in the manner stipulated by the law.

2. Objectives

The objectives of FFA are:

a) to improve the game of football constantly and promote, regulate and control it throughout the territory of FFA in the light of fair play and its unifying, educational, cultural and humanitarian values, particularly through youth and development programmes;

b) to organise competitions in Association football, futsal and beach soccer at national level, by defining precisely, as required, the areas of authority conceded to the various Leagues (if there are such) of which it is composed;

c) to draw up regulations and provisions and ensure their enforcement;

d) to protect the interests of its Members;

e) to respect and prevent any infringement of the Statutes, regulations, directives and decisions of FIFA, of UEFA and of FFA as well as the Laws of the Game, and to ensure that these are also respected by its Members, Leagues, Regional Associations, Clubs, Players, Officials, match agents and intermediaries;

f) to promote good governance, integrity, ethics and fair play with a view to preventing all methods or practices, such as corruption, doping or match manipulation, which might jeopardise the integrity of matches, competitions,

ինչպիսիք են կոռուպցիան, դոպինգի օգտագործումը կամ պայմանավորված խաղերը, ինչը կարող է վտանգել խաղերի, առաջնությունների, Խաղացողների, Պաշտոնատար անձանց և Անդամների բարեվարքությունը կամ հանգեցնել Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի ոլորտում չարաշահումների:

ե) խթանել կանանց ֆուտբոլի զարգացումը և ֆուտբոլի ղեկավարման բոլոր մակարդակներում կանանց լիարժեք մասնակցությունը:

ը) վերահսկել և ղեկավարել Հայաստանի տարածքում անցկացվող բոլոր տեսակի ֆուտբոլային ընկերական խաղերը:

թ) ազգային մակարդակում վերահսկել և ղեկավարել Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի խաղերը և վերահսկել և ղեկավարել Հայաստանի տարածքում անցկացվող բոլոր տեսակի միջազգային ֆուտբոլային խաղերը՝ համաձայն ՖԻՖԱ-ի և Կոնֆեդերացիաների համապատասխան կանոնադրությունների (ՖԻՖԱ-ի կանոնադրության 11-րդ կետի 1-ին ենթակետ) և կանոնակարգերի:

ժ) ապահովել միջազգային մարզական հարաբերությունները Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի կամ լողափնյա ֆուտբոլի ոլորտներում:

ժա) հյուրընկալել և անցկացնել միջազգային և ազգային առաջնություններ:

ժբ) ապահովել ՀՖՖ-ի գործունեության և ֆինանսական տարեկան հաշվետվությունների թափանցիկությունը և հրապարակայնությունը:

3. Մարդու իրավունքները

ՀՖՖ-ն պարտավորվում է հարգել միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքները և ձգտելու է խթանել այդ իրավունքների պաշտպանությունը:

Players, Officials and Members or give rise to abuse of Association football, futsal or beach soccer;

g) to promote the development of women's football and the full participation of women at all levels of football governance;

h) to control and supervise all friendly football matches of all forms played throughout the territory of Armenia;

i) to control and supervise Association football, futsal and beach soccer at national level and to control and supervise all forms of international football matches played throughout the territory of Armenia, in accordance with the relevant Statutes (clause 11 (1) of FIFA Statutes) and regulations of FIFA and of the Confederations;

j) to manage international sporting relations connected with Association football, futsal and beach soccer;

k) to host competitions at international and national levels;

l) to ensure the transparency and publicity of the FFA activities and its annual financial reports.

3. Human rights

FFA is committed to respecting all internationally recognised human rights and shall strive to promote the protection of these rights.

4. Խտրականության բացառում, իրավահավասարություն և ռասիզմի դեմ պայքար

Խտրականության ցանկացած դրսևորում որևէ պետության, մասնավոր անձի կամ մարդկանց խմբի նկատմամբ՝ որևէ ռասայական, մաշկի գույնի, էթնիկ, ազգային կամ սոցիալական ծագման, սեռի, հաշմանդամության, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ունեցվածքի, ծնունդի կամ որևէ այլ կարգավիճակի, սեռական կողմնորոշման կամ որևէ այլ տարբերակման հիմքով խստորեն արգելվում է և ենթակա է պատասխանատվության՝ անդամության կասեցման, հեռացման և/կամ այլ կարգապահական միջոցների կիրառմամբ:

5. Չեզոքություն և ինստիտուցիոնալ անկախություն

¹ ՀՖՖ-ն չեզոք է քաղաքական և կրոնական հարցերում:

² ՀՖՖ-ի Անդամները պետք է նույնպես չեզոք լինեն քաղաքական և կրոնական հարցերում, ինչպես նաև պետք է ապահովեն իրենց անդամների չեզոքությունը:

³ ՀՖՖ-ն պարտավոր է պահպանել իր անկախությունը և խուսափել անհարկի քաղաքական միջամտության ցանկացած դրսևորումներից: ՀՖՖ-ն ծավալում է անկախ գործունեություն և ապահովում իր գործունեության իրականացումն առանց որևէ երրորդ կողմի միջամտության:

6. Նպաստել բարեկամական հարաբերությունների զարգացմանը

¹ ՀՖՖ-ն նպաստում է հասարակության շրջանում և Անդամների, Ակումբների, Պաշտոնատար անձանց և Խաղացողների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը՝ հումանիտար նպատակներից ելնելով:

² ՀՖՖ-ն ապահովում է անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջոցները՝ Անդամների, Ակումբների, Պաշտոնատար անձանց և Խաղացողների հետ կամ միջև ծագած ցանկացած ներքին վեճ լուծելու նպատակով:

4. Non-discrimination, equality and stand against racism

Discrimination of any kind against a country, private person or group of people on account of race, skin colour, ethnic, national or social origin, gender, disability, language, religion, political opinion or any other opinion, wealth, birth or any other status, sexual orientation or any other reason is strictly prohibited and punishable by suspension or expulsion and/or disciplinary measures.

5. Neutrality and institutional independence

¹ FFA is neutral in matters of politics and religion.

² The Members of FFA shall also be neutral in matters of politics and religion and shall ensure that their own members remain neutral.

³ FFA shall remain independent and shall avoid any form of undue political interference. FFA shall manage its affairs independently and shall ensure that its own affairs are not influenced by any third parties.

6. Promoting friendly relations

¹ FFA shall promote friendly relations between its Members, Clubs, Officials and Players and in society for humanitarian objectives.

² FFA shall provide the necessary institutional means to resolve any internal dispute that may arise with or between its Members, Clubs, Officials and Players.

7. Խաղացողներ

¹ ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն կանոնակարգում է Խաղացողների կարգավիճակը և նրանց տրանսֆերային տեղափոխությունների դրույթները ՖԻՖԱ-ի կողմից պարբերաբար թարմացվող ՖԻՖԱ-ի Խաղացողների կարգավիճակի և տրանսֆերային Տեղափոխության կանոնակարգերին համապատասխան:

² Խաղացողների գրանցումը իրականացվում է ՀՖՖ-ի կանոնակարգերին համապատասխան:

8. Խաղի կանոնները

¹ ՀՖՖ-ն և նրա յուրաքանչյուր Անդամ պարտավորվում է խաղալ Ասոցիացիոն ֆուտբոլ խաղը ԻՖԱԲ-ի կողմից սահմանված Խաղի կանոններին համաձայն: Խաղի կանոնների սահմանումը կամ փոփոխումը ԻՖԱԲ-ի բացառիկ իրավասությունն է:

² ՀՖՖ-ն և նրա յուրաքանչյուր Անդամ պարտավորվում է խաղալ ֆուտզալ ՖԻՖԱ-ի կողմից սահմանված Ֆուտզալի Խաղի կանոններին համաձայն: Ֆուտզալի Խաղի կանոնների սահմանումը կամ փոփոխումը ՖԻՖԱ-ի բացառիկ իրավասությունն է:

³ ՀՖՖ-ն և նրա յուրաքանչյուր Անդամ պարտավորվում է խաղալ լողափնյա ֆուտբոլ ՖԻՖԱ-ի կողմից սահմանված Լողափնյա ֆուտբոլի Խաղի կանոններին համաձայն: Լողափնյա ֆուտբոլի Խաղի կանոնների սահմանումը կամ փոփոխումը ՖԻՖԱ-ի բացառիկ իրավասությունն է:

9. Իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց գործունեությունը

¹ ՀՖՖ-ի բոլոր մարմինները և Պաշտոնատար անձինք իրենց գործունեությունն իրականացնելիս պարտավոր են հետևել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի Կանոնադրություններին, կանոնակարգերին, կարգադրություններին և որոշումներին:

² ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող տարածքում Ասոցիացիոն ֆուտբոլ, ֆուտզալ և լողափնյա ֆուտբոլ խաղերում ներգրավված յուրաքանչյուր անհատ և կազմակերպություն պարտավոր է հետևել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի համապատասխան Կանոնադրություններին, կանոնակարգերին, էթիկայի կանոնակարգին և արդար խաղի սկզբունքներին,

7. Players

¹ The status of Players and the provisions for their transfer shall be regulated by the Executive Committee of FFA in accordance with the FIFA Regulations on the Status and Transfer of Players as revised by FIFA from time to time.

² Players shall be registered in accordance with the regulations of FFA.

8. Laws of the Game

¹ FFA and each of its Members shall play Association football in compliance with the Laws of the Game issued by the IFAB. Only the IFAB may lay down and alter the Laws of the Game.

² FFA and each of its Members shall play futsal in accordance with the Futsal Laws of the Game issued by FIFA. Only FIFA may lay down and alter the Futsal Laws of the Game.

³ FFA and each of its Members shall play beach soccer in accordance with the Beach Soccer Laws of the Game issued by FIFA. Only FIFA may lay down and alter the Beach Soccer Laws of the Game.

9. Conduct of bodies and Officials

¹ All bodies and Officials of FFA must observe the Statutes, regulations, directives and decisions of FIFA, of UEFA and of FFA in their activities.

² Every person and organization involved in the game of Association football, futsal and beach soccer in the territory of FFA is obliged to observe the relevant Statutes, regulations and the Code of Ethics of FIFA, UEFA and FFA and the principles of fair play as well as the principles of loyalty, integrity and sportsmanship.

ինչպես նաև արդարության, բարեվարքության և մարզական էթիկայի սկզբունքներին:

10. Պաշտոնական լեզուն

¹ ՀՖՖ-ի պաշտոնական լեզուն հայերենն է: Աշխատանքային փաստաթղթերը և տեքստերը գրվում են հայերենով և կարող են զուգորդվել այլ լեզվով թարգմանությամբ: Այլ լեզվով զուգորդվելու դեպքում հայերեն տեքստերը գերակայում են:

² Ժողովի պաշտոնական լեզուն հայերենն է:

II. ԱՆՂԱՄՈՒԹՅՈՒՆԸ

11. Անդամագրումը, դրա կասեցումը և հեռացումը

¹ Անդամագրման, անդամության կասեցման և հեռացման մասին որոշումները կայացնում է Ժողովը:

² Անդամ դառնալու համար դիմողը պետք է համապատասխանի ՀՖՖ-ի Կանոնադրությամբ սահմանված պահանջներին:

³ Անդամությունը դադարեցվում է անդամությունից դուրս գալու, հեռացման, լուծարման կամ գործունեության դադարեցման դեպքում: Անդամի լուծարման կամ այլ կերպ գործունեության դադարեցման դեպքում ՀՖՖ-ին վերջինիս անդամությունը անմիջապես դադարեցվում է՝ ՀՖՖ-ի Նախագահի որոշմամբ: Անդամության դադարեցումը Անդամին չի ազատում ՀՖՖ-ի կամ ՀՖՖ-ի այլ Անդամների նկատմամբ մինչև անդամության դադարեցման պահին առաջացած ֆինանսական պարտավորություններից, սակայն հանգեցնում է ՀՖՖ անդամակցությամբ պայմանավորված բոլոր իրավունքների դադարեցմանը:

12. Անդամները

¹ ՀՖՖ-ի անդամ կարող են դառնալ բացառապես Հայաստանի Հանրապետությունում գրանցված՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հետևյալ կազմակերպությունները.

- Ֆուտբոլի, ֆուտզալի, կանանց ֆուտբոլի և լողափնյա ֆուտբոլի ակումբներ,
- Պրոֆեսիոնալ Ֆուտբոլիստների Ասոցիացիա:

² ՀՖՖ-ի մաս կազմող, դուստր ընկերություն հանդիսացող կամ ՀՖՖ-ի կողմից այլ կերպ վերահսկվող ֆուտբոլի,

10. Official languages

¹ The official language of FFA shall be Armenian. Official documents and texts shall be written in Armenian and may have an accompanying translation in another language. In this case the Armenian text shall prevail.

² The official language at the Assembly shall be Armenian.

II. MEMBERSHIP

11. Admission, suspension and expulsion

¹ The Assembly shall decide whether to admit, suspend or expel a Member.

² Admission may be granted if the applicant fulfils the requirements established by the Statutes of FFA.

³ Membership is terminated by resignation, expulsion, dissolution or termination of activity. If a Member is dissolved or its activity terminated in other way, its membership of FFA shall terminate with immediate effect and the President of FFA shall pass decision on such termination. Loss of membership does not relieve the Member from its financial obligations towards FFA or other Members of FFA that occurred prior to the termination of membership, but leads to the loss of all rights arising out of membership to FFA.

12. Members

¹ Membership to the FFA is exclusively open to the following types of organizations that are duly registered in the Republic of Armenia as legal persons:

- Football, futsal, women's football and beach soccer clubs;
- The Professional Players' Association.

² Football, futsal and women's football clubs which are an integral part of, a subsidiary of, or controlled in any way

ֆուտզալի և կանանց ֆուտբոլի ակումբները չեն կարող դառնալ ՀՖՖ-ի անդամ: Նշված կազմակերպությունների թիմերի և խաղացողների մասնակցությունը ՀՖՖ-ի մրցաշարերին կանոնակարգվում է Գործադիր կոմիտեի կողմից (անհրաժեշտության դեպքում):

by the FFA shall not be eligible for membership to the FFA. The participation of teams and players of such types of organizations in the competitions of the FFA (if applicable) shall be regulated by the Executive Committee.

² Բն Տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ պետական ինստիտուտների մաս կազմող, դուստր ընկերություն հանդիսացող կամ վերջիններիս կողմից այլ կերպ վերահսկվող ֆուտբոլի կամ հանրային դպրոցները չեն կարող դառնալ ՀՖՖ-ի անդամ: Նշված կազմակերպությունների թիմերի և խաղացողների մասնակցությունը ՀՖՖ-ի մրցաշարերին կանոնակարգվում է Գործադիր կոմիտեի կողմից (անհրաժեշտության դեպքում). ցանկացած դեպքում, վերջիններիս մասնակցությունը թույլատրվում է միայն երիտասարդական մրցումներին:

^{2 bis} Football, futsal, and women's football clubs which are an integral part of, a subsidiary of, or controlled in any way by the FFA shall not be eligible for membership to the FFA. The participation of teams and players of such types of organizations in the competitions of the FFA (if applicable) shall be regulated by the Executive Committee.

³ ՀՖՖ-ն պարտավոր է վարել Անդամների գրանցամատյան: Գրանցամատյանը պետք է ներառի յուրաքանչյուր Անդամի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

³ FFA shall keep a register of Members. The register includes the following information on each Member:

- ա) եզակի նույնականացման/գրանցման համար,
- բ) անվանում,
- գ) կազմակերպաիրավական ձև,
- դ) լիազորված ստորագրողներ,
- ե) Գործադիր Կոմիտեի որոշմամբ լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես, ակումբի լիցենզավորմանը վերաբերող (օրինակ՝ իրավական խմբի կառուցվածք, ինքնություն, արդյունքներ):

- a) unique identification/registration number;
- b) legal name;
- c) legal form;
- d) authorised signatories;
- e) additional information, in particular relevant to club licensing (e.g. legal group structure; identity; results), as decided by the Executive Committee.

Վերոնշյալ «ա», «բ», «գ» և «դ» կետերին վերաբերող թարմացված տեղեկատվությունը պետք է հասանելի լինի նաև ՀՖՖ-ի պաշտոնական կայքէջում:

The up-to-date information related to letters a, b, c and d shall be publicly available on the website of FFA.

13. Անդամագրումը

13. Admission

¹ ՀՖՖ-ի անդամ դառնալու ցանկություն ունեցող իրավաբանական անձը գրավոր դիմում է ներկայացնում ՀՖՖ-ի գլխավոր քարտուղարություն:

¹ Any legal person wishing to become a Member of FFA shall apply in writing to the general secretariat of FFA.

² Դիմումին կից ներկայացվում են հետևյալ պարտադիր փաստաթղթերը.

² The application must be accompanied by the following mandatory items:

ա) դիմողի գործող կանոնադրության պատճենը և, առկայության դեպքում, ներքին կանոնակարգերը.

a) a copy of its legally valid statutes and, if applicable, regulations;

բ) հայտարարություն այն մասին, որ դիմողը պարտավորվում է մշտապես ղեկավարվել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններով, կանոնակարգերով և որոշումներով, ինչպես նաև Լոզանի (Շվեյցարիա) Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) որոշումներով, և երաշխավորել, որ իր անդամները, Ակումբները, Պաշտոնատար անձինք և Խաղացողները նույնպես կհարգեն այդ բոլոր կանոնները.

գ) հայտարարություն այն մասին, որ դիմողը պարտավորվում է մշտապես ղեկավարվել ԻՖԱԲ-ի կողմից սահմանված գործող Խաղի կանոններով, ինչպես նաև ՖԻՖԱ-ի կողմից սահմանված Լոդպիյա ֆուտբոլի Խաղի կանոններով և Ֆուտզալի Խաղի կանոններով.

դ) հայտարարություն այն մասին, որ դիմողը համաձայն է, որ ազգային առաջնությունների հարթությանն առնչվող և ՀՖՖ-ի կամ նրա անդամներից որևէ մեկի, ֆուտբոլիստների և պաշտոնյաների մասնակցությամբ ցանկացած վեճ՝ կապված ՀՖՖ-ի Կանոնադրության կամ կանոնակարգերի կիրառման հետ կամ ծագած դրանց կիրառումից, որպես վերջին ատյան (վեճի լուծման ՀՖՖ-ի ներքին բոլոր միջոցները սպառելուց հետո) պետք է հանձնվի միայն Լոզանի Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) քննությանը, որը կլուծի վեճը՝ բացառելով վեճը Դատարանի քննությանը հանձնելը.

ե) հայտարարություն այն մասին, որ դիմողը ճանաչում է Լոզանի Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) իրավասությունը միջազգային վեճերի հարցում՝ ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների դրույթներին համապատասխան.

զ) հայտարարություն այն մասին, որ դիմողը գտնվում է և գրանցված է ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող տարածքում.

է) հայտարարություն այն մասին, որ դիմողը բոլոր պաշտոնական տնային հանդիպումներն անցկացնելու է ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող տարածքում.

ը) հայտարարություն այն մասին, որ դիմողի կորպորատիվ կառուցվածքը երաշխավորում է որևէ արտաքին սուբյեկտից անկախ որոշումներ կայացնելու կարողությունը.

թ) հայտարարություն այն մասին, որ դիմողի բոլոր մարմինների անդամներն ընտրվել կամ նշանակվել են

b) a declaration that it will always comply with the Statutes, regulations and decisions of FFA, FIFA and UEFA as well as the decisions of the Court of Arbitration for Sport (CAS) in Lausanne (Switzerland) and ensure that these are also respected by its own members, Clubs, Officials and Players;

c) a declaration that it will comply with the Laws of the Game in force as laid down by the IFAB, as well as the Beach Soccer Laws of the Game and the Futsal Laws of the Game as laid down by FIFA;

d) a declaration that it agrees that any dispute of national dimension involving itself or any of its members, players and officials and arising from or related to the application of the Statutes or regulations of FFA will only be referred, in the last instance (i.e. after exhaustion of all internal channels within the FFA), to the Court of Arbitration for Sport (CAS), which will settle it to the exclusion of any Ordinary Court.

e) a declaration that it recognises the jurisdiction of the Court of Arbitration for Sport (CAS) in Lausanne for disputes of international dimension as specified in the relevant provisions of the FIFA and UEFA Statutes;

f) a declaration that it is located and registered in the territory of FFA;

g) a declaration that it will play all official home matches in the territory of FFA;

h) a declaration to the effect that the legal composition of the applicant guarantees that it can make decisions independently of any external entity;

i) a declaration to the effect that the members of its own bodies were elected or appointed as a result of a

այնպիսի ընթացակարգերով, որոնք ապահովում են ընտրության կամ նշանակման լիակատար անկախությունը.

ժ) դիմողի պաշտոնատար անձանց ցուցակը, որոնք իրավունք ունեն դիմողի անունից երրորդ անձանց առջև հանդես գալու իրավական հետևանքներ առաջացնող գործարքներում.

ժա) հայտարարություն այն մասին, որ դիմողը պարտավորվում է կազմակերպել կամ մասնակցել ընկերական խաղերին միայն ՀՖՖ-ի, Կոնֆեդերացիայի/Կոնֆեդերացիաների և/կամ Ասոցիացիայի/Ասոցիացիաների և/կամ ՖԻՖԱ-ի նախնական համաձայնությամբ՝ ՖԻՖԱ-ի Միջազգային խաղերի կանոնակարգերի համաձայն.

ժբ) դիմողի իրավասու մարմնի վերջին Ժողովի արձանագրության պատճենը:

14. Դիմումը քննարկելու ընթացակարգը

¹ Գործադիր կոմիտեն դիմում է Ժողովին դիմողի անդամությունը հաստատելու կամ մերժելու համար: Դիմողը կարող է նշել Ժողովին դիմումը ներկայացնելու հիմքերը:

² Անդամագրվելուն պես նոր Անդամը ձեռք է բերում անդամությունից բխող իրավունքները և պարտավորությունները: Անդամագրվելուն պես վերջինիս պատվիրակներն ստանում են ընտրելու կամ ընտրվելու իրավունք:

15. Անդամների իրավունքները

¹ ՀՖՖ-ի Անդամներն իրավունք ունեն.

ա) մասնակցել ՀՖՖ-ի Ժողովներին, նախօրոք ստանալ Ժողովի օրակարգը, հրավիրվել Ժողովին նախատեսված ժամկետներում, իրացնել բանավեճերին և քննարկումներին մասնակցելու և ընտրելու իրավունքները.

բ) ներկայացնել Ժողովի օրակարգում հարց ներառելու առաջարկ՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով.

գ) առաջադրել թեկնածուներ ՀՖՖ-ի ընտրովի մարմիններում.

procedure that guarantees the complete independence of the election or appointment;

j) a list of officials, specifying those who are authorised signatories with the right to enter into legally binding agreements with third parties;

k) a declaration that it undertakes to organise or participate in friendly matches only with the prior consent of FFA, the Confederation(s) and Association(s) concerned and/or FIFA, in accordance with the FIFA Regulations Governing International Matches;

l) a copy of the minutes of its last Assembly or constitutional meeting.

14. Request and procedure for application

¹ The Executive Committee shall request the Assembly either to admit or not to admit an applicant. The applicant may state the reasons for its application to the Assembly.

² The new Member shall acquire membership rights and duties as soon as it has been admitted. Its delegates are eligible to vote and be elected with immediate effect.

15. Members' rights

¹ The Members of FFA shall have the following rights:

a) to take part in the Assembly of FFA, to receive its agenda in advance, to be called to the Assembly within the prescribed time and to exercise their rights to participate in the debates and discussions and to exercise their voting rights;

b) to draw up proposals for inclusion in the agenda of the Assembly in the manner stipulated by these Statutes;

c) to nominate candidates for the elective bodies of FFA;

դ) մասնակցել ՀՖՖ-ի կողմից կազմակերպված առաջնություններին (եթե անցկացվում են այդպիսիք) և/կամ այլ սպորտային միջոցառումներին.

ե) հրավիրվել և ներկա գտնվել Ժողովի նիստերին.

զ) ծանոթանալ ՀՖՖ-ի մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները, վերադասության և դատական կարգով բողոքարկել այդ որոշումները.

է) ՀՖՖ-ից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ ՀՖՖ-ի կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը.

ը) օգտվել ՀՖՖ-ի Կանոնադրությունից և կանոնակարգերից բխող բոլոր մյուս իրավունքներից:

²Վերոհիշյալ իրավունքները իրացվում են սույն Կանոնադրությամբ սահմանված այլ դրույթներին և կիրառելի կանոնակարգերին համապատասխան:

16. Անդամների պարտականությունները

¹ ՀՖՖ-ի Անդամները պարտավոր են.

ա) կատարել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությունների, կանոնակարգերի, կարգադրությունների և որոշումների պահանջները, ինչպես նաև Լոզանի (Շվեյցարիա) Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) որոշումները և ապահովել դրանց կատարումն իրենց անդամների, ֆուտբոլիստների և պաշտոնյաների կողմից.

բ) ապահովել իրենց որոշում կայացնող մարմինների ընտրությունը (առնվազն 4 տարին մեկ անգամ).

գ) մասնակցել ՀՖՖ-ի կողմից կազմակերպված առաջնություններին (եթե անցկացվում են այդպիսիք) և այլ սպորտային միջոցառումներին.

դ) վճարել անդամավճարները.

d) to take part in competitions (if applicable) and/or other sporting activities organised by FFA;

e) to be invited and be present to the sessions of the Assembly;

f) to get familiarized with the minutes of the bodies of FFA, obtain the copies of the decisions adopted by them and to appeal the decisions before superior bodies or court;

g) demand information from FFA, obtain copies of documents on the amendments to the statute of FFA, minutes and decisions of the bodies, the management of the property, as well as obtain the copy of the conclusion of an independent auditor having audited the financial reports of FFA relating to the last 3 years.

h) to exercise all other rights arising from the Statutes and regulations of FFA.

² The exercise of these rights is subject to other provisions in these Statutes and the applicable regulations.

16. Members' obligations

¹ The Members of FFA shall have the following obligations:

a) to comply fully with the Statutes, regulations, directives and decisions of FIFA, UEFA and FFA as well as the decisions of the Court of Arbitration for Sport (CAS) in Lausanne (Switzerland) at all times and to ensure that these are also respected by their members, players and officials;

b) to ensure the election of their decision-making bodies at least every 4 years;

c) to take part in competitions (if applicable) and other sporting activities organised by FFA;

d) to pay their membership subscriptions;

ե) հարգել ԻՖԱԲ-ի կողմից սահմանված Խաղի կանոնները, ՖԻՖԱ-ի կողմից սահմանված Լողափնյա Ֆուտբոլի Խաղի կանոնները և Ֆուտզալի Խաղի կանոնները և ապահովել դրանց կատարումն իրենց անդամների, ֆուտբոլիստների և պաշտոնյաների կողմից.

զ) ներառել կանոնադրության մեջ դրույթ, ըստ որի՝ ազգային առաջնությունների հարթությանն առնչվող և տվյալ Անդամի կամ նրա անդամներից, ֆուտբոլիստներից կամ պաշտոնյաներից որևէ մեկի մասնակցությամբ ցանկացած վեճ՝ կապված ՀՖՖ-ի Կանոնադրության կամ կանոնակարգերի կիրառման հետ կամ ծագած դրանց կիրառումից, որպես վերջին աստյան (վեճի լուծման ՀՖՖ-ի ներքին բոլոր միջոցները սպառելուց հետո), պետք է հանձնվի Լոզանի Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) քննությանը, որը կլուծի վեճը՝ բացառելով վեճը Դատարանի քննությանը հանձնելը.

ե) ներառել կանոնադրության մեջ դրույթ, որով նա կընդունի Լոզանի Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) իրավասությունը միջազգային մրցաշարերի հարթությանն առնչվող վեճերի քննության հարցում՝ ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների դրույթներին համապատասխան.

ը) ծավալել երրորդ անձանց ոչ պատշաճ միջամտությունից զերծ անկախ գործունեություն.

թ) ապահովել, որ իրենց մարմիններն ընտրվեն կամ նշանակվեն այնպիսի ընթացակարգերով, որոնք ապահովում են ընտրության կամ նշանակման լիակատար անկախությունը.

ժ) ՀՖՖ-ին ներկայացնել իրենց կանոնադրության և կանոնակարգերի (առկայության դեպքում) լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև իրենց անունից՝ երրորդ անձանց առջև իրավական հետևանքներ առաջացնող գործարքներում հանդես գալու իրավունք ունեցող պաշտոնատար անձանց ցուցակում կատարված փոփոխությունները.

ժա) սպորտային բնույթի հարաբերություններ չունենալ չճանաչված միավորների հետ կամ այն Անդամների հետ, որոնց անդամությունը կասեցվել է կամ որոնք հեռացվել են անդամությունից.

e) to respect the Laws of the Game as laid down by the IFAB and the Beach Soccer Laws of the Game and the Futsal Laws of the Game as laid down by FIFA, and to ensure that these are also respected by their members, players and officials;

f) to adopt a statutory clause specifying that any dispute of national dimension involving themselves or any of their members, players or officials and arising from or related to the application of the Statutes or regulations, of FFA will only be referred, in the last instance (i.e. after exhaustion of all internal channels within the FFA), to the Court of Arbitration for Sport (CAS), which will settle it to the exclusion of any Ordinary Court.

g) to adopt a statutory clause recognizing the jurisdiction of the Court of Arbitration for Sport (CAS) in Lausanne for disputes of international dimension, as specified in the relevant provisions of the FIFA and UEFA Statutes;

h) to manage their affairs independently and ensure that their own affairs are not unduly influenced by any third parties;

i) to ensure that their bodies are either elected or appointed according to a procedure that guarantees the complete independence of the election or appointment;

j) to communicate to FFA any amendment of their statutes and regulations (if any) as well as the list of their Officials or persons who are authorised signatories with the right to enter into legally binding agreements with third parties;

k) not to maintain any relations of a sporting nature with entities that are not recognised or with Members that have been suspended or expelled;

ժբ) առաջնորդվել արդարության, բարեվարքության և մարզական էթիկայի սկզբունքներով՝ որպես արդար խաղի դրսևորում՝ ամրագրելով դրանք կանոնադրությամբ.

ժգ) ապահովել Կանոնադրության 13-րդ կետի 2-րդ ենթակետի պարտադիր դրույթների կատարումը իրենց անդամության ողջ ընթացքում.

ժդ) վարել անդամների ռեգիստր, որն անհրաժեշտ է պարբերաբար թարմացնել.

ժե) վավերացնել ՀՖՖ-ի Կանոնադրության պահանջներին համապատասխան կանոնադրություններ.

ժզ) ձեռնպահ մնալ ցանկացած այնպիսի գործողությունների կատարումից, որոնք կհակասեն ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի Կանոնադրություններով և այլ կանոնակարգերով սահմանված վեճերի լուծման կարգին.

ժէ) ՀՖՖ-ի պահանջով վերջինիս տրամադրել տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվություն և ցանկացած այլ տեղեկատվություն, և

ժը) ողջ ծավալով կատարել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրություններից և այլ կանոնակարգերից բխող մյուս բոլոր պարտականությունները:

² Որևէ Անդամի կողմից վերոհիշյալ պարտականությունների խախտումը կարող է հանգեցնել սույն Կանոնադրությամբ սահմանված պատասխանատվության:

³ Սույն կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ խախտումը կարող է հանգեցնել պատասխանատվության, նույնիսկ եթե երրորդ կողմի ազդեցությունը առաջ չի եկել տվյալ Անդամի մեղքով: ՀՖՖ-ի յուրաքանչյուր Անդամ պատասխանատու է ՀՖՖ-ի առջև իր ցանկացած և բոլոր մարմինների անդամների անզգույշ և դիտավորյալ գործողությունների (անգործության) համար:

17. Անդամության կասեցում

¹ Ժողովը կարող է կասեցնել որևէ Անդամի անդամությունը, եթե վերջինս պարբերաբար և/կամ կոպտորեն խախտում է իր պարտականությունները: Ընդ որում, Գործադիր կոմիտեն կարող է ժամանակավոր

l) to observe the principles of loyalty, integrity and good sporting behaviour as an expression of fair play through a statutory provision;

m) to observe the mandatory items specified under clause 13 paragraph 2 of these Statutes for the duration of their affiliation;

n) to administer a register of members which shall regularly be updated;

o) to ratify statutes that are in accordance with the requirements of the Statutes of FFA;

p) to refrain from carrying out any activity that may contradict the procedure for dispute resolution under the Statutes and other regulations of FIFA, UEFA and FFA;

q) to provide FFA, upon request, with its annual activity report and any other information requested by FFA; and

r) to comply fully with all other duties arising from the Statutes and other regulations of FIFA, UEFA and FFA.

² Violation of the above-mentioned obligations by any Member may lead to sanctions provided for in these Statutes.

³ Violation of paragraph 1(h) of this clause may also lead to sanctions, even if the third-party influence was not the fault of the Member concerned. Each Member of FFA is responsible towards FFA for any and all acts of the members of their bodies caused by the gross negligence or wilful misconduct of such members.

17. Suspension

¹ The Assembly may suspend a Member that seriously and/or repeatedly violates its obligations. The Executive Committee may, however, temporarily suspend a Member that seriously and/or repeatedly violates its

կասեցնել իր պարտականությունները լրջորեն և/կամ պարբերաբար խախտող Անդամի անդամությունը, որն ուժի մեջ կմտնի անմիջապես: Գործադիր կոմիտեի հաստատած կասեցումը գործում է մինչև հաջորդ Ժողովը, եթե Գործադիր կոմիտեն չի վերացրել կասեցումը մինչև այդ Ժողովը:

² Անդամության կասեցման համար անհրաժեշտ է Անդամների՝ Ժողովին քվեարկելու իրավունք ունեցող Պատվիրակների մեծամասնության (50%-ից ավել) ներկայությունը և վերջիններիս վավեր ձայների երկու երրորդը: Ժողովի կողմից որևէ Անդամի անդամության կասեցումն ուժի մեջ է մինչև Ժողովի կողմից կասեցման վերացումը: Անդամի անդամությունը կասեցնելու վերաբերյալ որոշմամբ Ժողովը կարող է Գործադիր կոմիտեին լիազորել վերացնել անդամության կասեցումը, պայմանով, որ նշված Անդամը կատարել է Ժողովի որոշմամբ սահմանված բոլոր պահանջները: Գործադիր կոմիտեի կողմից որևէ Անդամի անդամության կասեցումը ենթակա է հաջորդ Ժողովին հաստատման նույն մեծամասնությամբ: Չհաստատվելու դեպքում կասեցումն ինքնաբերաբար վերանում է:

³ Կասեցված անդամությամբ Անդամը չի կարող իրականացնել անդամությունից բխող իրավունքները, ինչը սակայն չի արգելում Անդամին՝ իր անդամության կասեցումը քննարկող Գործադիր Կոմիտեում և/կամ Ժողովում հանդես գալ իր պաշտպանությամբ: Մյուս Անդամները չեն կարող սպորտային կապեր ունենալ այն Անդամի հետ, որի անդամությունը կասեցված է: Կարգապահական և էթիկայի կոմիտեն կարող է կիրառել հետագա այլ պատժամիջոցներ:

⁴ Այն Անդամները (ֆուտբոլի, ֆուտզալի, կանանց ֆուտբոլի և լողափնյա ֆուտբոլի ակումբներ), որոնք չեն մասնակցում ՀՖՖ-ի կողմից կազմակերպված սպորտային միջոցառումներին (ներառյալ, բայց չսահմանափակվելով, մրցաշարերին) երկու տարի շարունակ, զրկվում են Ժողովին քվեարկելու իրավունքից, իսկ նրանց ներկայացուցիչները չեն ընտրվում կամ նշանակվում մինչև համապատասխան Անդամի կողմից այս մասով պարտավորությունների կատարումը:

18. Անդամությունից հեռացվելը

¹ Ժողովը կարող է որևէ Անդամի հեռացնել անդամությունից, եթե վերջինս կոպտորեն և պարբերաբար խախտում է ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի Կանոնադրությունները, կանոնակարգերը,

obligations with immediate effect. The suspension approved by the Executive Committee shall last until the next Assembly, unless the Executive Committee has revoked such suspension prior to such Assembly.

² The presence of a majority (more than 50%) of Delegates representing the Members eligible to vote at the Assembly is necessary for a suspension to be valid, and the decision for by a two-thirds majority of the valid votes cast. A suspension of a Member by the Assembly shall last until the Assembly revokes such suspension; in the resolution to suspend the Member, the Assembly may authorize the Executive Committee to lift the suspension provided the Member has met all the requirements laid down by the Assembly in the resolution. A suspension of a Member by the Executive Committee shall be confirmed at the next Assembly by the same majority. If it is not confirmed, the suspension shall be automatically lifted.

³ A suspended Member may not exercise its membership rights. This does not prevent the suspended Member from defending itself in front of the Executive Committee and/or at the Assembly at which its suspension is considered. Other Members may not entertain sporting contact with a suspended Member. The Disciplinary and Ethics Committee may impose further sanctions.

⁴ Members which are football, futsal, women's football and beach soccer club that do not participate in the sporting activities (including, but not limited to, competitions) organized by FFA for two consecutive years shall be suspended from voting at the Assembly and their representatives shall not be elected or appointed until their Member has fulfilled their obligations in this respect.

18. Expulsion

¹ The Assembly may expel a Member if it seriously and repeatedly violates the Statutes, regulations, directives or decisions of FIFA, UEFA and FFA or fails to comply with the membership criteria.

կարգադրությունները կամ որոշումները կամ դադարում է համապատասխանել անդամության չափանիշներին:

² Որևէ Անդամին անդամությունից հեռացնելու համար անհրաժեշտ է ժողովին քվեարկելու իրավունք ունեցող Անդամների Պատվիրակների մեծամասնության ներկայությունը (50%-ից ավել): Հեռացման մասին որոշումը ընդունվում է վավեր ձայների երեք քառորդ մեծամասնությամբ:

³ Այն Անդամները (ֆուտբոլի, ֆուտզալի, կանանց ֆուտբոլի և լողափնյա ֆուտբոլի ակումբներ), որոնք երեք տարի շարունակ չեն մասնակցում ՀՖՖ-ի կողմից կազմակերպված սպորտային միջոցառումներին (ներառյալ, բայց չսահմանափակելով, մրցաշարերին) ենթակա են հեռացման անդամությունից: Նշված Անդամների անդամությունը ՀՖՖ-ին անմիջապես դադարեցվում է:

19. Անդամությունից դուրս գալը

¹ Անդամը կարող է ներկայացնել ՀՖՖ-ից դուրս գալու դիմում, որն ուժի մեջ է մտնում տվյալ ֆուտբոլային մրցաշրջանից հետո: Անդամությունից դուրս գալու մասին դիմումը պետք է ներկայացվի գլխավոր քարտուղարություն ոչ ուշ, քան ֆուտբոլային մրցաշրջանի ավարտից վեց ամիս առաջ:

² Անդամությունից դուրս գալը Անդամին չի ազատում ՀՖՖ-ի կամ ՀՖՖ-ի այլ Անդամների նկատմամբ իր ունեցած ֆինանսական պարտավորություններից:

20. Անդամների և նրանց մարմինների անկախությունը

¹ Յուրաքանչյուր անդամ պետք է ապահովի իր գործունեության իրականացումն անկախ և առանց երրորդ անձանց ոչ պատշաճ ազդեցության:

² Անդամների մարմինները պետք է ընտրվեն կամ նշանակվեն դրանց կանոնադրություններով նախատեսված այնպիսի ժողովրդավարական ընթացակարգերով, որոնք ապահովում են ընտրության կամ նշանակման լիակատար անկախությունը:

³ Անդամների բոլոր այն մարմինները, որոնք չեն ընտրվել կամ նշանակվել վերոգրյալ 2-րդ կետի պահանջներին համապատասխան, ներառյալ ժամանակավոր մարմինները, չեն ճանաչվի ՀՖՖ-ի կողմից:

² The presence of a majority (more than 50%) of Delegates representing the Members eligible to vote at the Assembly is necessary for an expulsion to be valid, and the decision for expulsion must be adopted by a three-quarter majority of the valid votes cast.

³ Members which are football, futsal, women’s football and beach soccer club that do not participate in the sporting activities (including, but not limited to, competitions) organized by FFA for three consecutive years are subject to expulsion. The membership within the FFA of such Members shall terminate with immediate effect.

19. Resignation

¹ A Member may resign from FFA with effect from the end of a football season. Notice of resignation must reach the general secretariat no later than six months before the end of the football season.

² The resignation does not relieve the Member from its financial obligations towards FFA and the other Members of FFA.

20. Independence of Members and their bodies

¹ Each Member shall manage its affairs independently and with no undue influence from third parties.

² The Members’ bodies shall be either elected or appointed. The Members’ statutes shall provide for a democratic procedure that guarantees the complete independence of the election or appointment.

³ Any Members’ bodies that have not been elected or appointed in compliance with the provisions of par. 2 above, even on an interim basis, shall not be recognised by FFA.

⁴ Այն որոշումները, որոնք կայացվել են Անդամների այն մարմինների կողմից, որոնք չեն ընտրվել կամ նշանակվել վերոգրյալ 2-րդ կետի պահանջներին համապատասխան, չեն ճանաչվի ՀՖՖ-ի կողմից:

20¹. ՀՖՖ-ի շահառուները

¹ ՀՖՖ-ն իր նպատակներին համապատասխան ունի շահառուներ:

² ՀՖՖ-ի շահառուի կարգավիճակը սահմանվում կամ վերացվում է Գործադիր Կոմիտեի որոշմամբ:

³ ՀՖՖ-ի շահառուներ են Հայաստանի Հանրապետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք չեն կարող հանդիսանալ ՀՖՖ-ի անդամ, և որոնց գործունեությունը մշտապես առնչվում է ՀՖՖ-ի նպատակներին:

21. Ակումբների, Լիգաների, Մարզային ասոցիացիաների և Ակումբների այլ խմբերի կարգավիճակը

¹ Ակումբները, Լիգաները, Մարզային ասոցիացիաները և ՀՖՖ-ի հետ կապակցված Ակումբների այլ խմբերը սույն Կանոնադրության շրջանակներում ենթակա են ՀՖՖ-ին և ճանաչվում են ՀՖՖ-ի կողմից: ՀՖՖ-ի իրավասության ներքո գտնվող տարածքում կարող է լինել միայն մեկ բարձրագույն ազգային լիգա:

² Վերոգրյալ 1-ին ենթակետում նշված միավորների կանոնադրությունները և կանոնակարգերը պետք է համապատասխանեն ՀՖՖ-ի կանոնադրությանը: Մրցավարության, դպինգի դեմ պայքարի, ֆուտբոլիստների գրանցման, ակումբների արտոնագրման, կարգապահական միջոցների կիրառման՝ ներառյալ էթիկային հակասող գործողությունների առնչությամբ, և առաջնությունների բարեվարքությունն ապահովելու համար անհրաժեշտ միջոցների հետ կապված հարցերի կարգավորումը ՀՖՖ-ի բացառիկ իրավասությունն է:

³ Վերոգրյալ 1-ին ենթակետում նշված միավորներն անդամության վերաբերյալ իրենց բոլոր որոշումները պետք է կայացնեն անկախ՝ առանց երրորդ անձանց միջամտության: Սույն պարտավորությունը կիրառելի է անկախ նրանց կորպորատիվ կառուցվածքից:

⁴ Decisions passed by bodies that have not been elected or appointed in compliance with par. 2 above shall not be recognised by FFA.

20¹. Stakeholders of FFA

¹ FFA has stakeholders in conformity with its objectives.

² The Executive Committee shall grant or revoke the status of stakeholder of the FFA.

³ The stakeholders of the FFA are those legal persons registered in the Republic of Armenia and not eligible for membership to the FFA, provided always their activities are in relation with the FFA objectives.

21. Status of Clubs, Leagues, Regional Associations and other groups of Clubs

¹ Clubs, Leagues, Regional Associations or any other groups of Clubs affiliated to FFA shall be subordinate to, within the framework of these Statutes, and recognised by FFA. There shall only be one top-tier national league on the territory of FFA.

² The Statutes and regulations of the entities mentioned in paragraph 1 above must comply with FFA Statutes. FFA shall have the primary responsibility to regulate matters relating to refereeing, the fight against doping, the registration of players, club licensing, the imposition of disciplinary measures, including for ethical misconduct, and measures required to protect the integrity of competitions.

³ The entities mentioned in paragraph 1 above shall take all decisions on any matters regarding their membership independently of any external body. This obligation applies regardless of their corporate structure.

⁴ In any case, no natural or legal person (including but not limited to holding companies and subsidiaries) shall

⁴ Ցանկացած դեպքում, ոչ մի ֆիզիկական կամ իրավաբանական անձ (ներառյալ, սակայն չսահմանափակելով, մասնակցող (հոլդինգային) ընկերություն և դուստր ընկերություն) իրավունք չունի մեկից ավելի ակումբների կամ ակումբների խմբերի նկատմամբ հսկողություն իրականացնելու, եթե դրա հետևանքով կարող է վտանգվել որևիցե մրցախաղի կամ առաջնության անաչառությունը:

exercise control over more than one Club or group of Clubs whenever the integrity of any match or competition could be jeopardised.

III. ՊԱՏՎԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆՂԱՄԸ

III. HONORARY PRESIDENT AND HONORARY MEMBER

22. Պատվավոր նախագահ և պատվավոր անդամ

22. Honorary president and honorary member

¹ Ֆուտբոլին մատուցած ծառայությունների համար Ժողովը պատվավոր նախագահի կամ պատվավոր անդամի կոչում կարող է շնորհել ցանկացած անձի:

¹ The Assembly may bestow the title of honorary president or honorary member upon any person for meritorious service to football.

² Վերոհիշյալ կոչումները շնորհվում են Գործադիր կոմիտեի առաջարկությամբ:

² The Executive Committee shall make these nominations.

³ Պատվավոր նախագահը և պատվավոր անդամն իրավունք ունեն մասնակցելու Ժողովին: Նրանք կարող են միանալ քննարկումներին, սակայն քվեարկելու իրավունք չունեն:

³ The honorary president or honorary member may take part in the Assembly. They may join the debates but are not entitled to vote.

IV. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

IV. ORGANIZATION

23. ՀՖՖ-ի մարմինները

23. Bodies of FFA

¹ Ժողովը ՀՖՖ-ի բարձրագույն և իրավաստեղծ մարմինն է:

¹ The Assembly is the supreme and legislative body of FFA.

² Նախագահը ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի ղեկավարն է և իրավասու է ներկայացնել ՀՖՖ-ն առանց լիազորագրի:

² The President is the Head of the Executive Committee of FFA and is competent to represent FFA without power of attorney.

³ Գործադիր կոմիտեն ՀՖՖ-ի գործադիր մարմինն է:

³ The Executive Committee is the executive body of FFA;

⁴ Գլխավոր քարտուղարությունը (Գլխավոր քարտուղարը) ՀՖՖ-ի գործառնական և վարչական մարմինն է:

⁴ The general secretariat (the General Secretary) is the operational and administrative body of the FFA.

⁵ Մշտական և ժամանակավոր (ad-hoc) կոմիտեներն ունեն խորհրդակցական կարգավիճակ և աջակցում են Գործադիր կոմիտեի և գլխավոր քարտուղարության լիազորությունների իրականացմանը:

⁶ Ակումբների արտոնագրման մարմինները պատասխանատու են ՀՖՖ-ի կազմում ակումբների արտոնագրման համակարգի համար:

⁷ Անկախ կոմիտեներն իրենց գործառնություններն իրականացնում են սույն Կանոնադրությանը և կիրառելի կանոնակարգերին համապատասխան: Անկախ կոմիտեներն են Աուդիտի և համապատասխանության կոմիտեն, Ընտրական կոմիտեն և իրավական մարմինները:

⁸ Իրավական մարմիններն են Կարգապահական և էթիկայի կոմիտեն, Բողոքարկման կոմիտեն և Վեճերի լուծման պալատը:

⁹ ՀՖՖ-ի մարմինները ընտրվում կամ նշանակվում են ՀՖՖ-ի կողմից՝ առանց որևէ անհիմն արտաքին ազդեցության և սույն Կանոնադրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան: ՀՖՖ-ի մարմինների անդամները նախկինում չպետք է պաշտոնի հետ անհամատեղելի որևէ հանցագործության համար դատապարտված լինեն:

¹⁰ ՀՖՖ-ի մարմինների յուրաքանչյուր անդամ պարտավոր է զերծ մնալ հարցերի քննարկմանը և քվեարկությանը մասնակցելուց, եթե առկա է շահերի բախման հավանականություն կամ հնարավորություն: Մասնավորապես, ՀՖՖ-ի մարմինների անդամները պետք է մշտապես տեղեկացված լինեն և ենթարկվեն ՖԻՖԱ-ի էթիկայի կանոնակարգի շահերի բախմանն առնչվող համապատասխան դրույթներին և, ըստ այդմ, համապատասխանեցնեն իրենց գործելաոճը (օր.՝ զերծ մնան իրենց պարտականությունները կատարելուց, ծանուցեն ՀՖՖ-ի նախագահին շահերի հնարավոր բախման մասին):

24. ՀՖՖ-ի մարմինների անդամի հեռացումը

¹ Ժողովը կարող է ՀՖՖ-ի մարմիններից որևէ մեկի անդամին անդամությունից հեռացնել: Անդամի հեռացման հարցը Ժողովի օրակարգում ներառվում է Գործադիր կոմիտեի առաջարկությամբ: Գործադիր կոմիտեն կարող է ժամանակավորապես հեռացնել որևէ անդամի, բացառությամբ անկախ կոմիտեների անդամների, որոնք կարող են հեռացվել միայն Ժողովի

⁵ Standing and ad-hoc committees shall advise and assist the Executive Committee and the general secretariat in fulfilling their duties.

⁶ The Club licensing bodies are in charge of the club licensing system within FFA.

⁷ The independent committees fulfil their functions in accordance with these Statutes and applicable regulations. The independent committees shall consist of the Audit and Compliance Committee, the Electoral Committee and the judicial bodies.

⁸ The judicial bodies shall consist of the Disciplinary and Ethics Committee, the Appeal Committee and the Dispute Resolution Chamber.

⁹ The bodies of FFA shall be either elected or appointed by FFA itself without any undue external influence and in accordance with the procedures described in these Statutes. The members of the bodies of FFA shall not have previously been found guilty of any criminal offence incompatible with the position.

¹⁰ Any member of the bodies of FFA must withdraw from the debate and from taking a decision if there is any risk or possibility of a conflict of interest. In particular, members of the bodies of FFA shall always be aware of, and comply with, the relevant provisions of the FIFA Code of Ethics on conflicts of interest and adjust their conduct as necessary (e.g. abstain from performing their duties, notify the chairperson in cases of potential conflicts of interest).

24. Dismissal of a member of a body

¹ The Assembly may dismiss a member of a body of FFA. The Executive Committee may place the dismissal of a member of a body on the agenda for the Assembly. The Executive Committee may also dismiss a member of a body provisionally, with the exception of the members of the independent committees which can only be dismissed by the Assembly. Any Executive Committee

կողմից: Գործադիր կոմիտեի ցանկացած անդամ կարող է Գործադիր կոմիտեի կամ Ժողովի օրակարգում ներառել որևէ անդամին անդամությունից հեռացնելու մասին միջնորդություն ներկայացնելու առաջարկ:

² Անդամությունից հեռացնելու մասին միջնորդությունը պետք է պատճառաբանվի: Այն ուղարկվում է Գործադիր կոմիտեի անդամներին և/կամ ՀՖՖ-ի Անդամներին՝ օրակարգին կից:

³ Համապատասխան մարմնի հեռացվող անդամն իրավունք ունի մինչև քվեարկությունը արտահայտել հեռացման հարցի վերաբերյալ իր դիրքորոշումը:

⁴ Անդամությունից հեռացնելու մասին միջնորդության վերաբերյալ որոշումը կայացվում է փակ, գաղտնի քվեարկությամբ՝ Ժողովին ներկա Պատվիրակների վավեր ձայների երկու երրորդ մեծամասնությամբ:

⁵ Հեռացված անդամը (ժամանակավորապես կամ մեկընդմիջտ) անմիջապես ազատվում է իր գործառույթներից:

Ա. ԺՈՂՈՎԸ

25. Ժողովի սահմանումը և կազմը

¹ Ժողովը ՀՖՖ-ի բոլոր Անդամների պարբերաբար գումարվող ժողովն է: Միայն պատշաճ կերպով գումարված ժողովն է իրավասու որոշումներ կայացնելու:

² Ժողովը կազմավորվում է ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով ֆուտբոլում գենդերային հավասարության կարևորությունը:

³ Ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

⁴ Նախագահը վարում է Ժողովը սույն Կանոնադրությամբ, Ժողովի աշխատակարգով, ինչպես նաև կիրառելի կանոնակարգերով սահմանված կարգով: Նախագահը կարող է Ժողովը վարելու իր իրավասությունները փոխանցել Փոխնախագահին, Գործադիր կոմիտեի ցանկացած այլ անդամի կամ Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը հանդիսանում է Ժողովի քարտուղար:

member may submit a proposal to place such a motion for dismissal on the agenda of the Executive Committee or Assembly.

² The motion for dismissal must be justified. It will be sent to the members of the Executive Committee and/or to the Members of FFA along with the respective agenda.

³ The member of the body in question has the right to defend his position regarding its dismissal.

⁴ The motion for dismissal shall be decided by means of secret ballot. For the motion to be passed, a majority of two-thirds of the valid votes cast is required.

⁵ The member dismissed (provisionally or not) is relieved of his functions with immediate effect.

A. ASSEMBLY

25. Definition and composition of the Assembly

¹ The Assembly is the meeting at which all Members of FFA are regularly convened. Only an Assembly that is duly convened has the authority to make decisions.

² The Assembly shall be constituted in accordance with the principles of representative democracy and shall take into account the importance of gender equality in football.

³ An Assembly may be an Ordinary or Extraordinary Assembly.

⁴ The President shall conduct the Assembly in compliance with these Statutes, the Standing Orders of the Assembly as well as any applicable regulations. The President can delegate the powers of conducting the Assembly to the Vice President, any other member of the Executive Committee or the General Secretary. The General Secretary shall act as secretary of the Assembly.

⁵ Ժողովը կարող է նշանակել դիտորդների, ովքեր Ժողովին մասնակցում են առանց քննարկումների մասնակցելու և քվեարկելու իրավունքի:

26. Պատվիրակները և քվեարկությունը

¹ Ժողովը կազմված է Անդամներից:

² Ժողովում յուրաքանչյուր Անդամի անունից հանդես են գալիս մեկ ձայնի իրավունք ունեցող Պատվիրակը և թվով մինչև երկու՝ ձայնի իրավունք չունեցող ներկայացուցիչ: Որևէ անձ չի կարող ներկայացնել ՀՖՖ-ի ավելի քան մեկ անդամի:

³ Անդամին ներկայացնող Պատվիրակները և ներկայացուցիչները կարող են լինել միայն սովյալ Անդամի կազմից, որոնք նշանակվել կամ ընտրվել են այդ Անդամի համապատասխան իրավասու մարմնի կողմից՝ սույն Կանոնադրության 20-րդ կետի համաձայն: Պատվիրակներ և ներկայացուցիչներ կարող են լինել միայն համապատասխան Անդամի գործադիր մարմինների ղեկավարները (Նախագահ, Տնօրեններ և այլն), ղեկավարի տեղակալներ և (կամ) մարմիններ, որոնք իրավունք ունեն ներկայացնել համապատասխան Անդամին առանց լիազորագրի: Վերջիններս պետք է Ժողովին ներկայացնեն իրենց նշանակման փաստը հաստատող ապացույց:

⁴ Ժողովի յուրաքանչյուր Պատվիրակ ունի մեկ ձայնի իրավունք: Միայն Ժողովին ներկա Պատվիրակները քվեարկելու իրավունք ունեն: Ժողովի Պատվիրակները քվեարկում են անձամբ: Պատվիրակը չի կարող քվեարկել նամակով կամ քվեարկության համար լիազորել այլ անձի:

⁵ Գործադիր կոմիտեի և գլխավոր քարտուղարության Անդամները մասնակցում են Ժողովին՝ առանց քվեարկելու իրավունքի: Պաշտոնավարման ընթացքում Գործադիր կոմիտեի անդամները չեն կարող նշանակվել Ժողովի Պատվիրակներ:

⁶ Մինևսույն անձը չի կարող միաժամանակ հանդես գալ որպես որևէ պաշտոնի թեկնածու ՀՖՖ-ում և Պատվիրակ կամ ներկայացուցիչ Ժողովում:

27. Իրավասության շրջանակը

Ժողովն իրավասու է՝

⁵ The Assembly may appoint observers who take part in the Assembly without the right to debate or to vote.

26. Delegates and votes

¹ The Assembly is composed of the Members.

² Each Member shall be represented in the Assembly through one Delegate and up to two representatives, the latter with no voting rights. No one may represent more than one FFA member.

³ Delegates and representatives must belong to the Member that they represent and be appointed or elected by the appropriate body of that Member in accordance with clause 20 of these Statutes. As Delegates and representatives can be appointed only heads of executive bodies (President, Directors, etc.), deputy heads and/or bodies of the respective Member, having right to represent the Member without power of attorney. They must also provide evidence of their appointment at the Assembly.

⁴ Each Delegate has one vote in the Assembly. Only the Delegates present are entitled to vote. Delegates to the Assembly shall vote in person. Voting by proxy or by letter is not permitted.

⁵ The members of the Executive Committee and the General Secretary shall take part in the Assembly without voting rights. During their terms of office, members of the Executive Committee may not be appointed as Delegates to the Assembly.

⁶ No one may be a candidate for any office in FFA and a Delegate or representative to the Assembly at the same time.

27. Areas of authority

The Assembly has the following areas of authority:

- ա) ընդունելու կամ փոփոխելու սույն Կանոնադրությունը, Ժողովի աշխատակարգը, ինչպես նաև Ընտրական կանոնակարգը.
- բ) ստեղծելու այլ իրավաբանական անձ/ՀՖՖ-ի դուստր ընկերություններ,
- գ) որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում ՀՖՖ-ի մասնակցության մասին.
- դ) որոշումներ ընդունելու ՀՖՖ-ի առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.
- ե) հաստատելու ՀՖՖ-ի կազմակերպական կառուցվածքը.
- զ) հաստատելու ՀՖՖ-ի ռազմավարությունը, եթե ՀՖՖ-ն նախատեսում է ունենալ ռազմավարություն.
- է) դադարեցնելու ՀՖՖ-ի մարմինների (Գործադիր կոմիտե, Նախագահ, Գլխավոր քարտուղարություն)՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.
- ը) ընդունելու որոշում ՀՖՖ-ի վերակազմակերպման մասին.
- թ) արձանագրությունը ստուգելու համար նշանակում է 3 Պատվիրակների և անհրաժեշտության դեպքում հաստատում է վերջին ժողովի արձանագրությունը.
- ժ) ընտրում կամ ազատում է պաշտոնից Նախագահին, փոխնախագահ(ներ)ին և Գործադիր կոմիտեի անդամներին, ինչպես նաև անկախ կոմիտեների նախագահներին, փոխնախագահներին և անդամներին.
- ժա) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները.
- ժբ) նշանակում է հաշվիչ հանձնաժողովի անդամներին, ովքեր աջակցում են Գլխավոր քարտուղարին ընտրությունների համար հաստատված քվեաթերթիկները բաժանելիս և հաշվելիս.
- ժգ) հաստատում է ամենամյա առաջիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները՝ ներառյալ ամփոփ
- a) adopting or amending the Statutes and the Standing Orders of the Assembly as well as the Electoral Code;
- b) establishing other legal persons/subsidiaries of FFA;
- c) adopting decisions relating to participation of FFA in other organizations;
- d) adopting decisions on establishing separate subdivisions or institutions of FFA and approving their statutes;
- e) approving the association structure of FFA;
- f) approving the strategy of FFA, if FFA plans to have the strategy;
- g) terminating the effect of the decisions conflicting with the requirements of legal acts adopted by FFA bodies (Executive Committee, President, general secretariat);
- h) adopting decision on reorganization of FFA;
- i) appointing 3 Delegates to check the minutes, and approving the minutes of the last meeting, if necessary;
- j) electing or dismissing the President, the vice-president(s) and members of the Executive Committee, and the chairman, deputy chairman and members of the independent committees;
- k) defining the manner and conditions of remuneration of the executive body, if remuneration is payable to the executive body;
- l) appointing the scrutineers to count the votes and to assist the Secretary General in distributing and counting voting papers issued for the elections;

ֆինանսական հաշվետվությունը և տարեկան հաշվետվությունը.

ժդ) հաստատում է ՀՖՖ-ի բյուջեն.

ժե) հաստատում է գործունեության զեկույցը (որը վերաբերում է նախորդ ժողովից ի վեր ՀՖՖ-ի գործունեությանը).

ժզ) Գործադիր կոմիտեի առաջարկությամբ նշանակում է անկախ աուդիտին իրականացնող անձին (աուդիտորին).

ժէ) Գործադիր կոմիտեի առաջարկությամբ սահմանում է անդամավճարի չափը.

ի) Գործադիր կոմիտեի առաջարկությամբ որոշում է կայացնում «Ֆեդերացիայի պատվավոր նախագահ» կամ «պատվավոր անդամ» կոչումները շնորհելու վերաբերյալ.

իա) ընդունում է նոր Անդամների, կասեցնում է անդամությունը կամ հեռացնում Անդամին.

իբ) լուծարում է ՀՖՖ-ն, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.

իգ) սույն Կանոնադրությանը համաձայն՝ ընդունում է որոշումներ ժողովի իրավասության շրջանակում ներառված հարցերով, այդ թվում՝ որևէ Անդամի առաջարկությամբ:

28. Ժողովի քվորումը

¹ Ժողովի կողմից ընդունված որոշումները իրավագոր են միայն այն դեպքում, եթե քվեարկելու իրավունք ունեցող Անդամներին ներկայացնող Պատվիրակների մեծամասնությունը (ավելի քան 50%) ներկա է ժողովի սկզբին:

² Եթե ժողովի սկզբում քվորում չկա, ապա հաջորդ օրը՝ նույն ժամին և նույն տեղում, գումարվում է երկրորդ ժողովը նույն օրակարգով: Երկրորդ ժողովի սկզբին պետք է ներկա գտնվի ձայնի իրավունք ունեցող Անդամներին ներկայացնող Պատվիրակների մեծամասնությունը (50%-ից ավելին):

29. Ժողովի որոշումները

m) approving the annual audited financial statements, including the consolidated financial statements and the annual report;

n) approving the budget of FFA;

o) approving the activity report (containing the activities of FFA since the last Assembly);

p) appointing the independent auditor upon the proposal of the Executive Committee;

q) fixing the membership subscriptions on the recommendation of the Executive Committee;

r) deciding, upon the nomination of the Executive Committee, whether to bestow the title of honorary president or honorary member;

s) admitting, suspending or expelling a Member;

t) dissolving FFA, except for the cases where FFA is dissolved pursuant to the court ruling;

u) passing decisions at the request of a Member in accordance with these Statutes or passing any decision entrusted to the Assembly in accordance with these Statutes.

28. Quorum of the Assembly

¹ Decisions passed by the Assembly shall only be valid if a majority (more than 50%) of the Delegates representing the Members eligible to vote are present at the start of the Assembly.

² If a quorum is not achieved at the start of the Assembly, a second Assembly shall take place the next day, at the same time and place, with the same agenda. A majority (more than 50%) of the Delegates representing the Members eligible to vote must be present at the start of the second Assembly.

29. Decisions of the Assembly

¹ Քվեարկություն պահանջող որոշումները կայացվում են ձեռք բարձրացնելով, եթե սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ և եթե Ժողովն այլ որոշում չի կայացնում: Եթե ձեռք բարձրացնելու եղանակով պարզ չէ, թե մեծամասնությունը կողմ է քվեարկել այդ հարցին, թե ոչ, ապա քվեարկությունը անցկացվում է այբբենական հերթականությամբ Անդամների անունները կարդալու և նրանց դիրքորոշումը պարզելու միջոցով:

² Եթե Կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ, ապա ներկա վավեր ձայների մեծամասնությունը (ավելի քան 50%) բավարար է որոշումը իրավագոր համարելու համար: Մեծամասնության հաշվարկն անելիս պետք է հաշվի չառնել դատարկ, անվավեր քվեաթերթիկները և ձեռնպահությունը:

30. Ընտրությունները

¹ Ընտրություններն անցկացվում են գաղտնի քվեարկությամբ: Ընտրությունները պետք է անցկացվեն սույն Կանոնադրության և ՀՖՖ-ի Ընտրական կանոնակարգի համաձայն և Ընտրական կոմիտեի վերահսկողության ներքո: Թափուր տեղերի և թեկնածուների թվի հավասարության դեպքում Ժողովն իրավասու է հայտարարելու բաց քվեարկություն:

² Թեկնածուն ընտրվում է քվեարկության առաջին փուլում, եթե ստացել է գրանցված վավեր ձայների բացարձակ մեծամասնությունը (կեսից ավելին): Եթե որևէ թեկնածու վերը նշված անհրաժեշտ թվով ձայներ չի ստանում կամ առաջին փուլում չեն լրացվել բոլոր թափուր տեղերը, ապա անցկացվում է երկրորդ փուլ, որտեղ ընտրվում է (ընտրվում են) առավել ձայներ ստացած թեկնածուն (պարզ մեծամասնություն): Քվեարկության վավեր արդյունք չգրանցվելու դեպքում անցկացվում է ևս մեկ քվեարկություն, որում ընտրվում է առավել ձայներ ստացած թեկնածուն: Եթե քվեարկության այս փուլում ևս վավեր արդյունք չի գրանցվում, ապա նույն թեկնածուների մասնակցությամբ իրականացվում է վիճակահանություն:

³ Յուրաքանչյուր Անդամ կարող է առաջարկել մեկ թեկնածու ՀՖՖ-ի Նախագահի և մեկ թեկնածու Գործադիր կոմիտեի անդամի թափուր տեղերի համար : Այնուամենայնիվ, Անդամները կարող են Գործադիր կոմիտեում ներկայացված լինել միայն մեկ անդամով:

¹ A decision that requires a vote shall be reached by a show of hands, unless stipulated otherwise in these Statutes or unless the Assembly decides otherwise. If a show of hands does not result in a clear majority in favour of a motion, the vote shall be taken by calling the roll in alphabetical order.

² Unless otherwise stipulated in the Statutes, a majority (more than 50%) of the valid votes cast is sufficient for a decision to be valid. Blank ballot papers, invalid votes and abstentions shall be disregarded when calculating the majority.

30. Elections

¹ Elections shall be conducted by secret ballot. Elections shall be conducted in accordance with these Statutes and the Electoral Code of FFA and shall be supervised by the Electoral Committee. If the number of candidates is equal to the number of vacant positions, the Assembly may decide to proceed otherwise.

² A candidate is elected in the first ballot if supported by an absolute majority (more than half) of the valid votes cast. If no election is made, there shall be a second ballot, in which the candidate supported by a simple majority (most votes) shall be elected. In the event of a tie in the second ballot, there shall be a third ballot, in which the candidate supported by a simple majority shall be elected. In the event of a tie in the third ballot, election shall be determined by a drawing of lots.

³ Each Member may propose one candidate for the FFA President and one for the remaining seats on the Executive Committee. However, Members may only be represented in the Executive Committee once.

⁴ Գործադիր կոմիտեի անդամի թեկնածու առաջադրվելու համար թեկնածուները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին:

ա) մինչև թեկնածու առաջադրվելը վերջին հինգ տարիներից երկուսի ընթացքում ակտիվ դերակատարում ունենալ ՀՀ-ում ֆուտբոլի բնագավառում (Պաշտոնատար անձ (դիմելու պահին պաշտոնը չգրադեցնող), նախկին ֆուտբոլիստ (դիմելու պահին կարիերան ավարտած), կամ սպորտում այլ կերպ ներգրավված անձ (մարզական լրագրող, մեկնաբան, իրավաբան և այլն):

բ) լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի և բնակվել պետության տարածքում:

գ) լինել առնվազն 25 տարեկան և ունենալ ՀՀ-ում ընտրական իրավունք:

դ) տվյալ պաշտոնի հետ անհամատեղելի որևէ հանցագործության համար նախկինում դատապարտված չլինել:

ե) չգտնվել սնանկության գործընթացում:

⁵ Նախագահների, փոխնախագահների և անկախ կոմիտեիների անդամների ընտրություններին ընտրվում է/են այն թեկնածուն/թեկնածուները, որը/որոնք ստանում է/են առավել թվով ձայներ համապատասխան թափուր հաստիք/ներ/ը զբաղեցնելու համար: Այս ընտրությունները կարող են անցկացվել միասնական քվեարկությամբ (en bloc): Այդուհանդերձ, առնվազն 10 Անդամի առաջարկությամբ կարող է անցկացվել առանձին ընտրություն յուրաքանչյուր թեկնածուի համար:

⁶ Մեծամասնության հաշվարկն անելիս պետք է հաշվի չառնել դատարկ, անվավեր քվեաթերթիկները և ձեռնպահությունը:

⁷ Գործադիր կոմիտեի որևէ պաշտոնի համար թեկնածությունները և նրանց կենսագրությունները ՀՖՖ-ի գլխավոր քարտուղարությանն են ներկայացվում համապատասխան ընտրական Ժողովից առնվազն 30 օր առաջ: Թեկնածուների պաշտոնական ցուցակը տրամադրվում է ՀՖՖ-ի Անդամներին Գործադիր կոմիտեի ընտրության համար հրավիրվող Ժողովից առնվազն 10 օր առաջ: Սույն ենթակետով սահմանված դրույթները կիրառվում են նաև Արտահերթ Ժողովի ժամանակ անցկացվող ընտրությունների դեպքում:

⁴ The members of the Executive Committee shall fulfil the following requirements before being proposed as candidates:

a) to have played an active role in football in Armenia (as an Official (not holding office at the time of application), a former football player (having completed his/her career at the time of application) or personality otherwise involved in sports (e.g., sports journalist, commentator, lawyer, etc.) for two of the last five years before being proposed as candidates;

b) to be a citizen of the Republic of Armenia with residency within the country;

c) to be at least 25 years of age and have electoral rights in the Republic of Armenia;

d) not to have previously been found guilty of any criminal offence incompatible with their proposed position;

e) not to be in the process of bankruptcy.

⁵ For the election of the chairmen, deputy chairmen and members of the independent committees, the candidate(s) who receive(s) the most votes in respect of the free seat(s) shall be elected. These elections may be conducted en bloc. However, at the request of at least 10 Members, a separate vote for each candidate shall take place.

⁶ Blank ballot papers, invalid votes and abstentions shall be disregarded when calculating the majority.

⁷ Candidatures for any of the positions of the Executive Committee and their CVs shall be sent to the general secretariat of FFA at least 30 days before the relevant elective Assembly. The official list of candidates must be passed to the Members of FFA at least 10 days before the Assembly at which the Executive Committee will be elected. The provisions of this paragraph shall also apply when elections take place during an Extraordinary Assembly.

⁸ Անկախ կոմիտեներում որևէ պաշտոնի համար թեկնածությունները ներկայացվում են ՀՖՖ-ի Անդամներին տվյալ թեկնածուների ընտրության համար հրավիրվող Ժողովից առնվազն 10 օր առաջ:

⁹ Սույն կետով սահմանված կարգը չի տարածվում Վեճերի Լուծման Պալատի կազմի ընտրության վրա, որը կարգավորվում է Վեճերի Լուծման Պալատի կանոնակարգով:

31. Հերթական Ժողովը

¹ Հերթական ժողովն անցկացվում է տարին մեկ անգամ՝ մինչև ֆինանսական տարվա ավարտը:

² Ժողովի օրն ու վայրը հաստատում է Գործադիր կոմիտեն, ինչի մասին Անդամները գրավոր կերպով (ՀՖՖ-ում գրանցված էլեկտրոնային փոստին/ֆաքսին ուղարկելու կամ փոստային առաքման միջոցով) ծանուցվում են առնվազն 45 օր առաջ:

³ Եթե որևէ Անդամ ցանկանում է առաջարկություն ներկայացնել Ժողովին, ապա այն պետք է գրավոր ուղարկվի Գլխավոր քարտուղարություն՝ կից ներկայացվող բացատրագրով՝ Ժողովի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

⁴ Ժողովի գումարման մասին գրավոր ծանուցումն ուղարկվում է Անդամներին Ժողովի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ (ՀՖՖ-ում գրանցված էլեկտրոնային փոստին/ֆաքսին ուղարկելու կամ փոստային առաքման միջոցով): Սույն ծանուցումը պետք է պարունակի Ժողովի օրակարգը, գործունեության զեկույցը, ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորների զեկույցը ընտրական Ժողովի դեպքում թեկնածությունը հիմնավորող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

32. Հերթական Ժողովի օրակարգը

¹ Ժողովի օրակարգը կազմում է Գլխավոր քարտուղարը՝ Գործադիր կոմիտեի և Անդամների առաջարկությունների հիման վրա:

² Ժողովի օրակարգում պարտադիր ընդգրկվում են հետևյալ հարցերը:

⁸ Candidatures for any of the positions of the independent committees must be passed to the Members of FFA at least 10 days before the Assembly at which the members in question will be elected.

⁹ The procedure herein shall not apply to the election of the Dispute Resolution Chamber which shall be regulated by the regulations of the Dispute Resolution Chamber.

31. Ordinary Assembly

¹ The Ordinary Assembly shall be held every year until the end of the financial year.

² The Executive Committee shall fix the place and date of the Assembly. The Members shall be notified in writing at least 45 days in advance (the notice shall be delivered to email/fax address communicated to FFA or via mail service).

³ Any proposal that a Member wishes to submit to the Assembly shall be sent to the general secretariat in writing, with a brief explanation, at least 15 days before the date of the Assembly.

⁴ The written convocation notice shall be submitted to the Members at least 10 days before the date of the Assembly (the notice shall be delivered to email/fax address communicated to FFA or via mail service). This convocation notice shall contain the agenda, the activity report, the financial statements and the auditors' report, in case of an elective Assembly documents supporting the candidatures, and any other relevant documents.

32. Ordinary Assembly agenda

¹ The General Secretary shall draw up the agenda based on proposals from the Executive Committee and the Members.

² The Assembly agenda shall include the following mandatory items:

ա) հայտարարություն առ այն, որ Ժողովը հրավիրվել և գումարվել է ՀՖՖ-ի Կանոնադրությանը համապատասխան.	a) a declaration that the Assembly has been convened and composed in compliance with the Statutes of FFA;
բ) օրակարգի ներկայացում.	b) presentation of the agenda;
գ) Նախագահի ուղերձ.	c) an address by the President;
դ) Ժողովի արձանագրությունը հաստատող Պատվիրակների ընտրություն.	d) appointment of Delegates to check the minutes of the Assembly;
ե) հաշվիչ հանձնաժողովի ընտրություն.	e) appointment of scrutineers;
զ) Անդամների անդամության կասեցում կամ հեռացում (անհրաժեշտության դեպքում).	f) suspension or expulsion of Members (if applicable);
է) նախորդ Ժողովի արձանագրության հաստատում (անհրաժեշտության դեպքում).	g) approval of the minutes of the preceding Assembly (if applicable);
ը) գործունեության հաշվետվության հաստատում (որը վերաբերում է նախորդ Ժողովից ի վեր ՀՖՖ-ի գործունեությանը).	h) activity report (containing the activities since the last Assembly);
թ) տարեկան հաշվապահական հաշվեկշռի և եկամուտների և ծախսերի հաշվետվության ներկայացում.	i) presentation of the consolidated and revised balance sheet and the profit and loss statement;
ժ) նախորդ ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվության հաստատում.	j) approval of the financial statements of the previous financial period;
ծա) բյուջեի հաստատում.	k) approval of the budget;
ժբ) ՀՖՖ-ի կանոնադրության և Ժողովի աշխատակարգի փոփոխությունների մասին առաջարկությունների քվեարկություն (անհրաժեշտության դեպքում).	l) votes on proposals for amendments to the Statutes and the Standing Orders of the Assembly (if applicable);
ժգ) Գործադիր կոմիտեի և/կամ Անդամների կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում, պայմանով, որ դրանք ներկայացվել են վերոնշյալ 31-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընթացակարգի համաձայն.	m) discussion of proposals submitted by the Executive Committee and/or by the Members provided these followed the procedure stipulated under clause 31 paragraph 3 above;
ժդ) Գործադիր կոմիտեի առաջարկությամբ անկախ աուդիտորների նշանակում (անհրաժեշտության դեպքում).	n) appointment of independent auditors (if applicable) upon the proposal of the Executive Committee;
ժե) ՀՖՖ-ի որևէ մարմնի անդամի հեռացում (անհրաժեշտության դեպքում).	o) dismissal of a member of a body (if applicable);

ժգ) Գործադիր կոմիտեի նախագահի, փոխնախագահի և անդամների ընտրություն (անհրաժեշտության դեպքում).

p) election of the President, vice-president and members of the Executive Committee (if applicable);

ժե) Անկախ կոմիտեների (Աուդիտի և համապատասխանության կոմիտե, Ընտրական կոմիտե, իրավական մարմիններ) անդամների ընտրություն (անհրաժեշտության դեպքում).

q) election of the members of the independent committees [Audit and Compliance Committee, Electoral Committee and judicial bodies] (if applicable);

ժը) նոր Անդամների ընդունում (անհրաժեշտության դեպքում):

r) admission for membership (if applicable).

³ Հերթական Ժողովի օրակարգը ենթակա է փոփոխման, եթե Անդամների քվեարկելու իրավունք ունեցող ներկա Պատվիրակների երկու երրորդ մասը նման միջնորդություն է ներկայացնում:

³ The agenda of an Ordinary Assembly may be altered, provided two-thirds of the Delegates representing the Members present at the Assembly and eligible to vote agree to such a motion.

⁴ Ժողովը որոշում չի ընդունում օրակարգում չընդգրկված որևէ հարցի շուրջ:

⁴ The Assembly shall not take a decision on any point not included in the agenda.

33. Արտահերթ Ժողով

33. Extraordinary Assembly

¹ Գործադիր կոմիտեն կարող է ցանկացած պահի իր նախաձեռնությամբ հրավիրել Արտահերթ Ժողով:

¹ The Executive Committee may convene an Extraordinary Assembly at any time on its own initiative.

² Գործադիր կոմիտեն պարտավոր է Արտահերթ ժողով հրավիրել ՀՖՖ-ի Անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր դիմումով՝ դրանում նշված օրակարգով: Արտահերթ ժողովը պետք է անցկացվի դիմումը ստանալուց երկու ամսվա ընթացքում: Արտահերթ ժողով չհրավիրելու դեպքում դիմումը ստորագրած Անդամներն իրենց նախաձեռնությամբ հրավիրում են արտահերթ ժողով:

² The Executive Committee shall convene an Extraordinary Assembly if one third of the Members of FFA make such a request in writing. The request shall specify the items to be included on the agenda. An Extraordinary Assembly shall be held within two months of receipt of the request. If an Extraordinary Assembly is not convened, the Members who requested it may convene the Assembly themselves.

³ Արտահերթ ժողովի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ Անդամները գրավոր ծանուցվում են ժողովի անցկացման վայրի և օրվա մասին, և նրանց տրամադրվում է ժողովի օրակարգը (ծանուցումն ուղարկվում է ՀՖՖ-ին տրամադրված էլեկտրոնային փոստով/ֆաքսով կամ փոստային ծառայության միջոցով): Եթե Արտահերթ Ժողովի ժամանակ տեղի են ունենալու ընտրություններ, կիրառվում է սույն Կանոնադրության 30-րդ կետի 7-րդ ենթակետը:

³ The Members shall be notified of the place, date and agenda at least 10 days before the date of an Extraordinary Assembly in writing (the notice shall be delivered to email/fax address communicated to FFA or via mail service). If the Extraordinary Assembly is an elective Assembly, clause 30 paragraph 7 of these Statutes shall apply.

⁴ Եթե Արտահերթ ժողովը հրավիրվում է Գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ, վերջինս պարտավոր է կազմել դրա օրակարգը: Եթե Արտահերթ ժողովը հրավիրվում է Անդամների նախաձեռնությամբ, ապա օրակարգը պարունակում է վերջիններիս կողմից բարձրացված հարցերը:

⁴ When an Extraordinary Assembly is convened on the initiative of the Executive Committee, it must draw up the agenda. When an Extraordinary Assembly is convened upon the request of Members, the agenda must contain the points raised by those Members.

⁵ Արտահերթ ժողովի օրակարգը փոփոխման ենթակա չէ:

⁵ The agenda of an Extraordinary Assembly shall not be altered.

34. Կանոնադրության և Ժողովի աշխատակարգի փոփոխությունները և լրացումները

34. Amendments to the Statutes and the Standing Orders of the Assembly

¹ Ժողովն իրավասու է կատարել Կանոնադրության և Ժողովի աշխատակարգի փոփոխություններ և լրացումներ:

¹ The Assembly is responsible for amending the Statutes and the Standing Orders of the Assembly.

² Կանոնադրությունում կամ Ժողովի աշխատակարգում փոփոխություն կամ լրացում անելու մասին առաջարկությունները ՀՖՖ-ի Անդամի կամ Գործադիր կոմիտեի կողմից ներկայացվում են քարտուղարությանը՝ գրավոր ձևով և կից բացատրագրով: Անդամի կողմից ներկայացված առաջարկը համարվում է վավեր, եթե այն ստացել է առնվազն երկու Անդամի գրավոր աջակցությունը:

² Any proposals for an amendment to the Statutes and the Standing Orders of the Assembly must be submitted in writing with a brief explanation to the general secretariat by a Member or by the Executive Committee. A proposal submitted by a Member is valid, provided it has been supported in writing by at least two other Members.

³ Կանոնադրությունում և Ժողովի աշխատակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ քվեարկությունը վավեր համարելու համար, անհրաժեշտ է ձայնի իրավունք ունեցող Անդամների ներկայացնող Պատվիրակների մեծամասնության (ավելի քան 50%) ներկայությունը:

³ For a vote on an amendment to the Statutes and to the Standing Orders of the Assembly to be valid, a majority (more than 50%) of the Delegates representing the Members eligible to vote must be present.

⁴ Կանոնադրությունում կամ Ժողովի աշխատակարգում փոփոխություն կամ լրացում անելու մասին առաջարկությունը ընդունվում է միայն վավեր ձայների երեք քառորդ մեծամասնությամբ:

⁴ A proposal for an amendment to the Statutes and to the Standing Orders of the Assembly shall only be adopted by a three-quarters majority of the valid votes cast.

35. Ժողովի արձանագրությունը

35. Minutes of the Assembly

Գլխավոր քարտուղարությունը պատասխանատու է Ժողովի արձանագրությունը կազմելու համար: Ժողովի արձանագրությունները ստուգվում են հատուկ նշանակված Պատվիրակների կողմից, ստորագրվում Նախագահի և Գլխավոր քարտուղարի (որը հանդես է գալիս որպես Ժողովի քարտուղար) կողմից և ուղարկվում են ՀՖՖ-ի անդամներին՝ ստորագրումից հետո առնվազն մեկ ամսվա ընթացքում: ՀՖՖ-ի Անդամների կողմից Ժողովի արձանագրության ստացման օրվանից մեկամսյա ժամկետում Գլխավոր քարտուղարին գրավոր առարկություն չներկայացնելու դեպքում այն համարվում է հաստատված, իսկ հակառակ պարագայում՝ այն ներկայացվում է հաջորդ Ժողովի քննարկմանը:

The General Secretary shall be responsible for recording the minutes at the Assembly. The minutes shall be checked by the Delegates designated, and shall be signed by the President and the General Secretary, in the capacity of secretary of the Assembly, and shall be sent to the FFA members within one month after the verification of the minutes. The minutes shall be regarded as approved if, within a month of their receipt, no written objection is presented to the General Secretary; otherwise the minutes shall be placed on the agenda of next Assembly for consideration.

36. Որոշումների ուժի մեջ մտնելը

Ժողովի կողմից ընդունված որոշումներն ուժի մեջ են մտնում Ժողովի փակումից անմիջապես հետո, եթե սույն Կանոնադրությամբ այլ բան սահմանված չէ կամ եթե Ժողովը որոշման ուժի մեջ մտնելու այլ ժամկետ չի սահմանում:

Բ. ԳՈՐԾԱՂԻՐ ԿՈՄԻՏԵ

37. Կազմը

¹ Գործադիր կոմիտեն կազմված է 13 անդամից, որոնցից առնվազն երեքը՝ կին:

- 1 Նախագահից
- 1 փոխնախագահից
- 11 անդամից:

² Գործադիր կոմիտեի Նախագահը, փոխնախագահը և մյուս անդամներն ընտրվում են Ժողովի կողմից սույն Կանոնադրության 30-րդ կետին համապատասխան: Մինչև ընտրվելը կամ վերընտրվելը նրանք անցնում են համապատասխանության ստուգում Ընտրական կոմիտեի կողմից՝ սույն Կանոնադրության և Ընտրական կանոնակարգի դրույթների համաձայն:

³ Գործադիր կոմիտեի Նախագահը, փոխնախագահը և անդամները պաշտոնավարում են չորս տարի ժամկետով: Նրանց պաշտոնավարումը կատարվում է նույն ընտրական շրջանով: Նրանց լիազորությունները ծագում են նրանց ընտրության հարցը քննած Ժողովի ավարտից անմիջապես հետո: Անձը չի կարող Նախագահի պաշտոնում պաշտոնավարել երեք ժամկետից ավելի (անընդմեջ կամ ընդհատումներով): Գործադիր կոմիտեի անդամը չի կարող պաշտոնավարել երեք ժամկետից ավելի (անընդմեջ կամ ընդհատումներով): Սույն ենթակետի կիրառման առումով՝ եթե անձը զբաղեցրել է պաշտոնը այդ պաշտոնի համար սահմանված պաշտոնավարման ժամկետից պակաս ժամանակահատվածում, ապա այդպիսի պաշտոնավարման ժամկետը դիտարկվում է որպես պաշտոնավարման մեկ լրիվ ժամկետ:

⁴ Գործադիր կոմիտեի անդամը մինչև ժամանակ չի կարող լինել ՀՖՖ-ի որևէ անկախ մարմնի կամ ՀՖՖ-ի գլխավոր քարտուղարության անդամ և չի կարող նշանակվել/ընտրվել որպես ՀՖՖ-ի Ժողովին որևէ Անդամի Պատվիրակ կամ ներկայացուցիչ:

36. Effective dates of decisions

Decisions passed by the Assembly shall come into effect for the Members immediately after the close of the Assembly, unless otherwise stipulated in the present Statutes or unless the Assembly fixes another date for a decision to take effect.

B. EXECUTIVE COMMITTEE

37. Composition

¹ The Executive Committee consists of 13 members, at least three of whom shall be women, as follows:

- 1 President
- 1 vice-president
- 11 members.

² The President, the vice-president and the other members of the Executive Committee shall be elected by the Assembly in accordance with clause 30 of these Statutes. They shall undergo an integrity check to be conducted by the Electoral Committee in accordance with the provisions of these Statutes, the Electoral Code prior to their election or re-election.

³ The mandate of the President, vice-president and members of the Executive Committee is for four years. Their terms of office shall follow the same electoral cycle. Their mandates shall immediately begin after the end of the Assembly which has elected them. No person may serve as President for more than three terms of office (whether consecutive or not). A member of the Executive Committee may serve for no more than three terms of office (whether consecutive or not). In the sense of this paragraph, any partial term of office shall count as one full term.

⁴ A member of the Executive Committee may not at the same time be a member of an independent body of FFA or of the general secretariat of FFA and may not be appointed/elected as Delegate or representative at the Assembly of FFA.

⁵ Եթե Գործադիր կոմիտեի որևէ պաշտոն կամ պաշտոնների մինչև 50% դառնում է թափուր, Գործադիր կոմիտեն լրացնում է այդ պաշտոն(ներ)ը մինչև հաջորդ ժողովը, որտեղ տվյալ պաշտոնում ընտրվում են փոխարինողներ՝ պաշտոնավարման մնացյալ ժամկետով:

⁵ If a position or up to 50% of the positions of the Executive Committee become vacant, the Executive Committee shall fill the position(s) in question until the next Assembly, when a replacement will be elected for the remaining period of office.

⁶ Պաշտոնը ավտոմատ կերպով համարվում է թափուր՝ պաշտոնավարողի մահվան, պաշտոնից հրաժարվելու կամ այն դեպքում, երբ Գործադիր կոմիտեի անդամը չի մասնակցում երեք հաջորդական հերթական նիստի կամ եթե նա հինգ հաջորդական ամիսների ընթացքում չի մասնակցում Գործադիր կոմիտեի նիստերին՝ առանց հիմնավոր պատճառների (հիվանդություն, արտերկրյա գործուղում՝ համապատասխան փաստաթղթերով հաստատված):

⁶ A position will be automatically considered vacant in case of death, resignation or if a member of the Executive Committee does not participate in three consecutive ordinary meetings or does not participate in meetings of the Executive Committee for a period of five consecutive months without justified reasons (illness or business trip abroad, confirmed by respective documents).

⁷ Եթե Գործադիր կոմիտեի պաշտոնների ավելի քան 50% դառնում է թափուր, ապա գլխավոր քարտուղարությունը գումարում է Արտահերթ ժողով՝ տվյալ պաշտոններում մնացյալ ժամկետով փոխարինողներ ընտրելու համար:

⁷ If more than 50% of the positions of the Executive Committee become vacant, the general secretariat shall convene an Extraordinary Assembly in order to elect the replacements for the remaining period of office.

38. Նիստերը

¹ Գործադիր կոմիտեն նիստ է հրավիրում առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

38. Meetings

¹ The Executive Committee shall meet at least once every two months.

² Գործադիր կոմիտեի նիստը հրավիրում է Նախագահը: Գործադիր կոմիտեի անդամների մեծամասնության (ավելի քան 50%) պահանջով Նախագահը պարտավոր է նիստը գումարել 14 օրվա ընթացքում: Եթե Նախագահը վերոհիշյալ ժամկետում նիստ չի գումարում, ապա Գործադիր կոմիտեի մյուս անդամներն իրենք են նիստ հրավիրում: Այդ դեպքում նիստը հրավիրող անդամները պետք է օրակարգն ուղարկեն Գործադիր կոմիտեի բոլոր անդամներին նիստից առնվազն երեք օր առաջ՝ համաձայն ներքոնշյալ 3-րդ ենթակետի:

² The President shall convene the Executive Committee meetings. If a majority (more than 50%) of the Executive Committee members request a meeting, the President shall convene it within 14 days. If the President does not convene the requested meeting by the aforementioned deadline, the other members of the Executive Committee shall convene it themselves. In that case, the members convening the meeting must send the agenda to all members of the Executive Committee at least three days before the meeting in line with paragraph 3 below.

³ Նախագահը, գլխավոր քարտուղարության աջակցությամբ, կազմում է նիստի օրակարգը: Գործադիր կոմիտեի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի հանդես գալու օրակարգում կետեր ավելացնելու առաջարկությամբ: Գործադիր կոմիտեի անդամներն առնվազն 7 օր առաջ գլխավոր քարտուղարություն են ներկայացնում այն հարցերը, որոնք ցանկանում են ներառել օրակարգի մեջ: Օրակարգն ուղարկվում է Գործադիր կոմիտեի անդամներին նիստի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ:

³ The President, assisted by the general secretariat, shall compile the agenda. Each member of the Executive Committee is entitled to propose items for inclusion in the agenda. The members of the Executive Committee must submit the items they wish to be included in the agenda for the meeting to the general secretariat at least 7 days before the meeting. The agenda must be sent out to the members of the Executive Committee at least three days before the meeting.

⁴Գլխավոր քարտուղարը մասնակցում է Գործադիր կոմիտեի նիստերին առանց քվեարկելու իրավունքի. նրա դերը խորհրդատվական է: Եթե Գլխավոր քարտուղարն ի վիճակի չէ մասնակցելու նիստին, ապա նա կարող է առաջադրել ներկայացուցչի (ով իր փոխարեն կմասնակցի նիստին), որը ենթակա է Գործադիր կոմիտեի կողմից հաստատման:

⁴ The General Secretary shall take part in the meetings of the Executive Committee in a consultative role and without voting rights. If the General Secretary is unable to attend a meeting, he may nominate a representative to attend the meeting on his behalf, subject to the approval of the Executive Committee.

⁵ Գործադիր կոմիտեի նիստերն անցկացվում են դռնփակ: Այդուհանդերձ, Գործադիր կոմիտեն կարող է հրավիրել երրորդ անձանց՝ նիստին մասնակցելու համար: Վերջիններս քվեարկելու իրավունք չունեն և Գործադիր կոմիտեի թույլտվությամբ միայն կարող են կարծիք հայտնել:

⁵ The meetings of the Executive Committee shall not be held in public. The Executive Committee may, however, invite third parties to attend. Those third parties shall not have voting rights, and may only express an opinion with the permission of the Executive Committee.

39. Գործադիր կոմիտեի լիազորությունները

39. Powers of the Executive Committee

Գործադիր կոմիտեն.

The Executive Committee:

ա) Գլխավոր քարտուղարության աջակցությամբ նախապատրաստում և հրավիրում է ՀՖՖ-ի Հերթական և Արտահերթ ժողովները.

a) shall prepare, with the assistance of the general secretariat, and convene the Ordinary and Extraordinary Assembly of FFA;

բ) նշանակում է մշտական հանձնաժողովների նախագահներին, փոխնախագահներին և անդամներին.

b) shall appoint the chairmen, deputy chairmen and members of the standing committees;

գ) ցանկացած պահի, ըստ անհրաժեշտության, կարող է որոշում կայացնել ժամանակավոր կոմիտեներ ստեղծելու մասին.

c) may decide to set up ad-hoc committees if necessary at any time;

դ) հաստատում և հրապարակում է ՀՖՖ-ի այլ կանոնակարգեր, ինչպիսիք են մշտական և ժամանակավոր կոմիտեների կազմավորման կանոնակարգերը, ՀՖՖ-ի ներքին կազմակերպական կանոնակարգը, որոնք, համաձայն սույն Կանոնադրության, վերապահված չեն այլ մարմինների իրավասությանը.

d) shall approve and issue any other FFA regulations, such as the regulations for the organization of standing committees and ad-hoc committees, and Internal Organization Regulations of the FFA, which are not in the competence of another body as set out in these Statutes;

ե) Նախագահի առաջարկությամբ նշանակում և ազատում է պաշտոնից Գլխավոր քարտուղարին.

e) shall appoint or dismiss the General Secretary on the proposal of the President;

զ) Ժողովին է ներկայացնում անկախ աուդիտորներին,

f) shall propose the independent auditors to the Assembly;

է) մինչ հաջորդ Ժողովի գումարումը նշանակում է Գործադիր կոմիտեում (Գործադիր կոմիտեում մեկ կամ մինչև 50% թափուր պաշտոնների առկայության դեպքում) և անկախ կոմիտեներում առկա թափուր պաշտոններում փոխարինողներին.

g) shall appoint replacements for vacancies in the Executive Committee if a position or up to 50% of the positions of the Executive Committee become vacant and in the independent committees until the next Assembly;

ը) հաստատում և հրապարակում է ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող առաջնությունների մասնակցության պայմանների և դրանց անցկացման փուլերի մասին կանոնակարգերը.

թ) նշանակում է ազգային հավաքականների մարզիչներին (կանանց, տղամարդկանց, ֆուտզալի) և այլ տեխնիկական անձնակազմի.

ժ) ապահովում է Կանոնադրության կիրառումը և նախաձեռնում է դրանց կիրառման համար անհրաժեշտ գործնական միջոցառումներ.

ժա) կարող է պաշտոնից ազատել ՀՖՖ-ի որևէ մարմնի անդամի կամ ժամանակավորապես կասեցնել ՀՖՖ-ի Անդամի անդամությունը մինչև հաջորդ Ժողովի անցկացումը՝ բացառությամբ անկախ Կոմիտեների անդամների.

ժբ) կարող է իր լիազորությունների իրականացումը պատվիրակել ՀՖՖ-ի այլ մարմիններին.

ժգ) նշանակում է դիտորդների, ովքեր կարող են մասնակցել Ժողովին առանց քննարկումներին մասնակցելու կամ ընտրելու իրավունքի.

ժդ) որոշումներ է ընդունում այն բոլոր հարցերի վերաբերյալ, որոնք «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վերապահված են գործադիր մարմնի իրավասությանը և որոնց կատարումը պատվիրակված է Գործադիր Կոմիտեի Ղեկավարին (Նախագահին), այն հարցերի վերաբերյալ, որոնք Ժողովի իրավասություններից դուրս են կամ օրենքով կամ սույն Կանոնադրությամբ չեն վերապահվում ՀՖՖ-ի այլ մարմինների իրավասությանը:

40. Որոշումները

¹ Գործադիր կոմիտեն որևէ հարցի շուրջ քննարկում չի սկսում, եթե իր անդամների մեծամասնությունը (50%-ից ավելի) ներկա չէ նիստին:

² Գործադիր կոմիտեն որոշումներ է ընդունում վավեր ձայների մեծամասնությամբ (50%-ից ավելի): Ձայների հավասարության դեպքում Նախագահի ձայնը որոշիչ է: Ներկայացուցչի կամ նամակի միջոցով քվեարկությունն արգելվում է:

h) shall approve and issue regulations governing the conditions of participation in and the staging of competitions organised by FFA;

i) shall appoint the coaches for the national teams (men, women and futsal) and other technical staff;

j) shall ensure that the Statutes are applied and adopt the executive arrangements required for their application;

k) may dismiss a member of a body of FFA or suspend a Member of FFA provisionally until the next Assembly, with the exception of the members of the independent committees;

l) may delegate tasks arising out of its area of authority to other bodies of FFA;

m) may appoint observers who may take part in the Assembly without the right to debate or to vote.

n) shall pass decisions on all cases that are within the sphere of responsibility of the executive body pursuant to Art. 23 (3) of the Law of the Republic of Armenia “On Non-Governmental Organizations” and the implimentation of which is delegated to the Head of Executive Committee (President), cases that do not come within the sphere of responsibility of the Assembly or are not reserved for other FFA bodies by law or under these Statutes.

40. Decisions

¹ The Executive Committee shall not engage in valid debate unless a majority (more than 50%) of its members are present.

² The Executive Committee shall reach decisions by a majority (more than 50%) of the valid votes cast. In the event of a tied vote, the President shall have the casting vote. Voting by proxy or by letter is not permitted.

³ Գործադիր կոմիտեի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ձեռնպահ մնալ հարցերի քննարկմանը և քվեարկությանը մասնակցելուց, եթե առկա է կամ ենթադրվում է շահերի բխման հնարավորություն:

⁴ Ընդունված որոշումներն արձանագրվում են:

⁵ Գործադիր կոմիտեի ընդունած որոշումներն ուժի մեջ են մտնում անմիջապես, եթե Գործադիր կոմիտեն այլ որոշում չի կայացնում:

⁶ Նախագահը կարող է նաև հրավիրել Գործադիր կոմիտեի նիստ՝ Գործադիր կոմիտեի երկու նիստերի միջև ընկած ժամանակահատվածում անհապաղ լուծում պահանջող ցանկացած հարցի քննարկման նպատակով: Եթե Գործադիր կոմիտեի անդամները չեն կարող ֆիզիկապես ներկա գտնվել նիստին և սույն Կանոնադրության 40-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներին համապատասխան ապա որոշումները կարող են ընդունվել գրավոր հաղորդակցության այլ ժամանակակից միջոցներով (օրինակ՝ էլ. փոստ կամ հաղորդագրությունների ծրագրեր):

Գ. ՆԱԽԱԳԱՀԸ

41. Նախագահը և նրա լիազորությունները

¹ Նախագահը Գործադիր կոմիտեի ղեկավարն է, ով իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել ՀՖՖ-ն: Նախագահը ընտրվում է չորս տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ սույն Կանոնադրության համապատասխան դրույթների համաձայն ժամկետի երկարաձգման հնարավորությամբ:

² Նախագահը.

ա) ապահովում է Ժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների կիրառումը՝ զլխավոր քարտուղարության միջոցով.

բ) սնօրինում է ՀՖՖ-ի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, ՀՖՖ-ի առօրյա բնականոն գործունեության հետ կապված կնքում է այն գործարքները (ներառյալ, բայց չսահմանափակվելով, ծառայությունների մատուցման պայմանագրեր, աշխատանքային պայմանագրեր), որոնց արժեքը չի գերազանցում 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ այլ արժույթով դրա համարժեքը.

³ Any member of the Executive Committee must withdraw from the debate and from taking a decision in a matter where any conflict of interests exists or is perceived to exist.

⁴ The decisions taken shall be recorded in the minutes.

⁵ The decisions taken by the Executive Committee shall come into effect immediately, unless the Executive Committee decides otherwise.

⁶ The President may also convene the Executive Committee on an urgent basis to deal with any matter requiring immediate settlement between two meetings of the Executive Committee. If the members of the Executive Committee cannot meet physically and subject to clause 40 par. 1 and 2, decisions may be passed through other modern means of written communication (e.g. emails or messaging apps).

C. PRESIDENT

41. President and his/her powers

¹ The President is the Head of the Executive Committee, who is entitled to represent FFA without power of attorney. The President is elected for the term of four years with the possibility of renewal in accordance with the respective provisions of these Statutes.

² The President has the following areas of authority:

a) implementing the decisions passed by the Assembly and the Executive Committee through the general secretariat;

b) disposing of FFA property (including financial assets), entering into transactions relating to day-to-day activity of FFA (including but not limited to service agreements, employment agreements) with the maximum value of AMD 100,000,000 (one hundred million) or its equivalent in other currency;

- զ) ներկայացնում է ՀՖՖ-ն Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- զ) representing FFA in the Republic of Armenia and foreign states;
- դ) տալիս է լիազորագրեր՝ ՀՖՖ-ի անունից ներկայացուցչություն իրականացնելու համար.
- դ) issuing powers of attorney to act on behalf of FFA;
- ե) բանկերում բացում է ՀՖՖ-ի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ.
- ե) opening settlement and other accounts (including in foreign currency) in banks;
- զ) արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- զ) issuing orders, decrees, giving mandatory instructions and controlling their implementation;
- է) հաստատում է ՀՖՖ-ի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.
- գ) approving the staff-list and annual cost estimate of FFA;
- ը) հաստատում է ՀՖՖ-ի գործունեությունը կանոնակարգող այն ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները, որոնց հաստատումը սույն Կանոնադրությամբ վերապահված չէ ՀՖՖ-ի այլ մարմնի իրավասությանը.
- հ) approving internal documents regulating the activities of FFA (including internal disciplinary and other rules of its separate subdivisions and institutions), approval of which is not submitted to the competence of other body of FFA;
- թ) հաստատում է ՀՖՖ-ի այն մարմինների հաշվետվությունները, որոնց հաստատումը սույն Կանոնադրությամբ վերապահված չէ ՀՖՖ-ի այլ մարմնի իրավասությանը.
- ի) approving the reports of those bodies of FFA, approval of which is not submitted to the competence of other body of FFA;
- ժ) հաստատում է անդամավճարների և մուտքավճարների գանձումը կազմակերպելու կարգը.
- յ) approving the procedure for organizing payment of membership subscriptions and entrance fees;
- ժա) գործողություններ է ձեռնարկում ՀՖՖ-ի մարմինների արդյունավետ գործունեության ապահովման համար՝ սույն Կանոնադրությամբ սահմանված նրանց խնդիրների իրականացման նպատակով.
- կ) ensuring the effective functioning of the bodies of FFA in order that they achieve the objectives described in these Statutes;
- ժբ) իրականացնում է գլխավոր քարտուղարության աշխատանքի վերահսկում.
- լ) supervising the work of the general secretariat;
- ժգ) գործողություններ է ձեռնարկում ՀՖՖ-ի և նրա անդամների, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների միջև կապեր ապահովելու համար.
- մ) ensuring the relations between FFA and its Members, FIFA, UEFA, political bodies and other organizations;

ժդ) նշանակում է հավաքական թիմերի մարզիչներին և տեխնիկական անձնակազմին, վերջիններիս հետ կնքում է պայմանագրեր.

ժե) հաստատում և հրապարակում է ՀՖՖ-ի Ներքին կազմակերպական կանոնակարգը (ՆԿԿ).

ժզ) ՀՖՖ-ի անունից հանդես է գալիս այն կազմակերպությունների կառավարման մարմիններում (ժողովներում), որոնցում ՀՖՖ-ն ունի մասնակցություն (բաժնետոմսեր), քվեարկելու օրակարգի ցանկացած հարցով (ներառյալ լուծարման), ստորագրելու արձանագրություններ/որոշումներ, ներառյալ, բայց չսահմանափակելով միակ մասնակցի/բաժնետիրոջ որոշումներ.

³Նախագահի բացառիկ լիազորությունն է Գլխավոր քարտուղարի նշանակման կամ պաշտոնից հեռացման մասին առաջարկություն ներկայացնելը:

⁴Նախագահը նախագահում է Ժողովի, Գործադիր կոմիտեի նիստերը, ինչպես նաև բոլոր այն կոմիտեների նիստերը, որոնց նախագահող է նշանակված:

⁵Գործադիր կոմիտեի նիստերին Նախագահն օգտվում է սովորական ձայնի իրավունքից, սակայն ձայների հավասարության պարագայում նրա ձայնը որոշիչ է:

⁶Նախագահի բացակայության կամ լիազորությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է փոխնախագահը:

⁷Սույն Կանոնադրության 37-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված հանգամանքներով Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում Նախագահին փոխարինում է փոխնախագահը՝ մինչև հաջորդ Ժողովի գումարումը: Ժողովը պարտավոր է ընտրել նոր Նախագահին պաշտոնավարման մնացած ժամկետով ոչ ուշ, քան հաստիքը թափուր մնալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

⁸ՀՖՖ-ի կանոնակարգերով կարող են սահմանվել Նախագահի այլ լիազորություններ:

⁹Նախագահը և փոխնախագահը կարող են վարձատրվել միայն այն դեպքում, եթե ՀՖՖ-ում իրենց կատարած աշխատանքը համարվում է հիմնական աշխատանք, իսկ ՀՖՖ-ն իրենց միակ աշխատավայրը: Նախագահի աշխատավարձը սահմանվում է Գլխավոր քարտուղարի աշխատավարձի 1,8 գործակցի

n) appointing the coaches for the representative teams and other technical staff

o) approving and issuing the Internal Organization Regulations (IOR) of FFA;

p) acting on behalf of FFA in managing bodies (assemblies) of the organizations, wherein FFA holds membership interest (shares), voting on any item on the agenda (including dissolution), signing minutes/decisions (including but not limited to decisions of the sole member/shareholder).

³ Only the President may propose the appointment or dismissal of the General Secretary.

⁴ The President shall preside over the Assembly and the Executive Committee meetings and those committees of which he has been appointed chairman.

⁵ The President shall have an ordinary vote on the Executive Committee and, whenever votes are equal, shall have a casting vote.

⁶ If the President is absent or unavailable, the vice-president shall deputise.

⁷ If the position of the President becomes vacant in the sense of clause 37 paragraph 6 of these Statutes, the vice-president shall deputise until the next Assembly. This Assembly shall elect a new President for the remaining period of office no later than within three months after the day the position of the President became vacant.

⁸ FFA regulations may stipulate other authorities of the President.

⁹ The President and vice-president may be paid only if their work in FFA is considered to be their main job and FFA is their only workplace. The President's salary is set at the rate of 1.8 per cent and the salary of the vice-president at the rate from 0.8 to 1.2 per cent of the salary of the General Secretary.

արտադրյալի չափով, իսկ փոխնախագահինը՝ 0,8-ից 1.2 գործակցի արտադրյալի չափով:

Դ. ՆԵՐՎԱՑԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

42. Ներկայացուցչությունը

¹ Նախագահը և Գլխավոր քարտուղարը ՀՖՖ-ի ի պաշտոնն ներկայացուցիչներն են և իրավասու են ՀՖՖ-ի անունից հանդես գալու երրորդ անձանց հետ հարաբերություններում:

² Նախագահը և Գլխավոր քարտուղարը պետք է համատեղ հանդես գան ՀՖՖ-ի անունից ՀՖՖ-ի հետևյալ գույքը (ներառյալ ֆինանսական միջոցները) տնօրինելիս և ՀՖՖ-ի անունից հետևյալ պայմանագրերը կնքելիս.

- ա) անշարժ գույքի օտարման կամ օտարման հնարավորության հետ կապված ցանկացած գործարքներ (պայմանագրեր), անկախ դրանց արժեքից,
- բ) գույքի գրավադրման, ցանկացած երաշխիքների և երաշխավորությունների տրամադրման գործարքներ (պայմանագրեր), անկախ դրանց արժեքից,
- գ) այլ պայմանագրեր, գործարքներ (կամ մի քանի փոխկապակցված գործարքներ), որի (որոնց) արժեքը գերազանցում է 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամը կամ այլ արժույթով դրա համարժեքը:

Ե. ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

43. Գլխավոր քարտուղարությունը

Գլխավոր քարտուղարությունը Գլխավոր քարտուղարի ղեկավարման ներքո իրականացնում է ՀՖՖ-ի վարչական գործունեությունը: Գլխավոր քարտուղարության անդամները ղեկավարվում են ՀՖՖ-ի Ներքին կազմակերպական կանոնակարգով (ՆԿԿ) և պարտավոր են Բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները:

44. Գլխավոր քարտուղարը

¹ Գլխավոր քարտուղարն այն մարմինն է, որը «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն իրավասու է առանց լիազորագրի ներկայացնել ՀՖՖ-ն:

D. REPRESENTATION RIGHTS

42. Representation

¹ The President and the General Secretary represent FFA legally and are entitled to commit FFA towards third parties.

² The President and the General Secretary shall jointly represent the FFA when disposing of FFA property (including financial assets) and entering into the following transactions on behalf of FFA:

- a) any transaction (agreement) in relation to transfer of or possibility of transfer of title in real estate, regardless of the value of such transaction;
- b) any transaction (agreement) in relation to pledge of property, provision of any guarantee, regardless of the value of such transaction;
- c) other agreements, transactions (or several inter-related transactions) with a value in excess of AMD 100,000,000 (one hundred million) or its equivalent in other currency.

E. GENERAL SECRETARIAT AND GENERAL SECRETARY

43. General secretariat

The general secretariat shall carry out all the administrative work of FFA under the direction of the General Secretary. The members of the general secretariat are bound by the Internal Organization Regulations (IOR) of FFA and shall fulfil the given tasks in good faith.

44. General Secretary

¹ The General Secretary is a body, which is entitled to represent FFA without the power of attorney pursuant to Art. 13 (1)(7) of the Law of the Republic of Armenia “On Non-Governmental Organizations”.

²Գլխավոր քարտուղարը նշանակվում է պայմանագրի հիման վրա: Նա պետք է ունենա անհրաժեշտ մասնագիտական դրակավորումներ:

²The General Secretary shall be appointed on the basis of an agreement governed by private law and shall have the necessary professional qualifications.

³Գլխավոր քարտուղարը՝

³The General Secretary shall be responsible for:

ա) ապահովում է Ժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների կիրառումը՝ համաձայն Նախագահի կարգադրությունների:

a) implementing decisions passed by the Assembly and Executive Committee in compliance with the President's directives;

բ) տնօրինում է ՀՖՖ-ի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, ՀՖՖ-ի առօրյա բնականոն գործունեության հետ կապված կնքում է այն գործարքները (ներառյալ, բայց չսահմանափակելով, ծառայությունների մատուցման պայմանագրեր, աշխատանքային պայմանագրեր), որոնց արժեքը չի գերազանցում 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամը կամ այլ արժույթով դրա համարժեքը:

b) disposing of FFA property (including financial assets), entering into transactions relating to day-to-day activity of FFA (including but not limited to service agreements, employment agreements) with the maximum value of AMD 50,000,000 (fifty million) or its equivalent in other currency;

գ) ներկայացնում է ՀՖՖ-ն Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

c) representing FFA in the Republic of Armenia and foreign states;

դ) տալիս է լիազորագրեր՝ ՀՖՖ-ի անունից իր իրավասությունների շրջանակում ընդգրկված հարցերով ներկայացուցչություն իրականացնելու համար:

d) issuing powers of attorney to act on behalf of FFA within the scope of authorities of the General Secretary;

ե) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

e) issuing orders, decrees, giving mandatory instructions within the scope of authorities of the General Secretary and controlling their implementation;

զ) մասնակցում է Ժողովին, Գործադիր կոմիտեի, Արտակարգ հարցերի կոմիտեի և մշտական ու ժամանակավոր կոմիտեի նիստերին:

f) attending the Assembly and meetings of the Executive Committee, Emergency Committee and the standing and ad-hoc committees;

է) կազմակերպում է Ժողովի անցկացումը, Գործադիր կոմիտեի նիստերը և ՀՖՖ-ի այլ մարմինների աշխատանքը:

g) organizing the Assembly and meetings of the Executive Committee and other bodies of FFA;

ը) կազմում է Ժողովի, Գործադիր կոմիտեի, ինչպես նաև մշտական ու ժամանակավոր կոմիտեի նիստերի արձանագրությունները:

h) compiling the minutes for the meetings of the Assembly, Executive Committee, and standing and ad-hoc committees;

թ) վերահսկում և վարում է ՀՖՖ-ի հաշիվները:

i) managing and keeping the accounts of FFA properly;

ժ) վերահսկում և վարում է ՀՖՖ-ի նամակագրությունը:

j) the correspondence of FFA;

ժա) համակարգում է Անդամների, կոմիտեների, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հետ ՀՖՖ-ի հարաբերությունները.

ժբ) կազմակերպում է գլխավոր քարտուղարության աշխատանքը.

ժգ) նշանակում և ազատում է գլխավոր քարտուղարության աշխատողներին.

ժդ) Նախագահին է ներկայացնում գլխավոր քարտուղարության ղեկավար անձնակազմի թեկնածուներին.

ժե) ապահովում է ընտրությունների համար անհրաժեշտ նյութական և օպերատիվ աջակցությունը.

ժզ) իրականացնում է ՀՖՖ-ի Ներքին կազմակերպական կանոնակարգով (ՆԿԿ) Գլխավոր քարտուղարին վերապահված այլ լիազորություններ:

⁴Գլխավոր քարտուղարը չի կարող լինել Ժողովի Պատվիրակ կամ ՀՖՖ-ի որևէ այլ մարմնի անդամ:

Զ. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

45. Մշտական կոմիտեները

¹ ՀՖՖ-ի կառուցվածքային ստորաբաժանումներ հանդիսացող մշտական կոմիտեներն են.

ա) Ֆինանսական կոմիտեն.

բ) ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն.

գ) Տեխնիկական և զարգացման կոմիտեն.

դ) Մրցավարական կոմիտեն.

ե) Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեն.

զ) Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն.

է) Մասսայական ֆուտբոլի կոմիտեն.

ը) Շահառուների կոմիտեն.

թ) Բժշկական կոմիտեն:

k) the relations with the Members, committees, FIFA and UEFA;

l) organizing the work of general secretariat;

m) the appointment and dismissal of staff working in the general secretariat;

n) proposing managerial staff for the general secretariat to the President;

o) providing logistic and operative support for the elections;

p) any additional responsibilities and duties assigned to the General Secretary shall be stipulated in the Internal Organization Regulations (IOR) of FFA.

⁴The General Secretary shall not be an Assembly Delegate or a member of any other body of FFA.

F. STANDING COMMITTEES

45. Standing Committees

¹ The standing committees being structural subdivisions of FFA are:

a) Finance Committee;

b) Organizing Committee for FFA Competitions;

c) Technical and Development Committee;

d) Referees Committee;

e) Committee for Women's Football and Futsal;

f) Players' Status Committee;

g) Grassroots Committee;

h) Stakeholders' Committee;

i) Medical Committee.

² Մշտական կոմիտեների նախագահները կարող են լինել Գործադիր կոմիտեի անդամներ (բացառությամբ Մրցավարական կոմիտեի նախագահի, որը Գործադիր կոմիտեի անդամ չի կարող հանդիսանալ): Մշտական կոմիտեների անդամները նշանակվում են Գործադիր կոմիտեի կողմից՝ ՀՖՖ-ի Անդամների կամ ՀՖՖ-ի Նախագահի առաջարկությամբ: Գործադիր կոմիտեն պարտավոր է ապահովել կանանց ներկայացվածությունը մշտական կոմիտեների կազմում: Մշտական կոմիտեների նախագահները, փոխնախագահները և անդամները նշանակվում են չորս տարի պաշտոնավարման ժամկետով: Անհրաժեշտության դեպքում Գործադիր կոմիտեն կարող է նշանակել արտաքին տեխնիկական անձնակազմի կամ փորձագետներին:

³ Յուրաքանչյուր մշտական կոմիտեի նախագահ ներկայացնում է իր կոմիտեն և պաշտոնավարում է Ներքին կազմակերպական կանոնակարգի (ՆԿԿ) դրույթներին համապատասխան:

⁴ Յուրաքանչյուր կոմիտեի նախագահ գլխավոր քարտուղարության հետ համատեղ սահմանում է նիստերի գումարման օրերը, ապահովում է բոլոր խնդիրների կատարումը և զեկուցում է Գործադիր կոմիտեին:

⁵ Գործադիր կոմիտեն և Գործադիր կոմիտեի հաստատմամբ՝ յուրաքանչյուր մշտական կոմիտե կարող են անհրաժեշտության դեպքում հիմնել բյուրո և/կամ ենթակոմիտե, որը կզբաղվի հրատապ հարցերի լուծմամբ: Այդ բյուրոյի և/կամ ենթակոմիտեի բոլոր քննարկումների և որոշումների մասին զեկուցվում է համապատասխան մշտական կոմիտեին՝ առաջին իսկ հնարավորության դեպքում:

⁶ Յուրաքանչյուր մշտական կոմիտե կարող է առաջարկություններ ներկայացնել Ներքին կազմակերպական կանոնակարգի (ՆԿԿ)՝ տվյալ կոմիտեին վերաբերող համապատասխան դրույթներում փոփոխություններ և լրացումներ անելու մասին:

46. Ֆինանսական կոմիտեն

Ֆինանսական կոմիտեն վերահսկում է ՀՖՖ-ի ֆինանսական կառավարումը և Գործադիր կոմիտեին խորհրդատվություն է ներկայացնում ակտիվների կառավարման և ֆինանսական հարցերի վերաբերյալ: Այն վերլուծում է ՀՖՖ-ի բյուջեն և Գլխավոր քարտուղարի կողմից կազմված ֆինանսական

² The chairmen of the standing committees may be members of the Executive Committee, with the exception of those of the Referees Committee, who may not belong to the Executive Committee. The members of each standing committee shall be appointed by the Executive Committee on the proposal of the Members of FFA or the President of FFA. The Executive Committee shall ensure appropriate female representation on standing committees. The chairmen, deputy chairmen and the members of the standing committees shall be designated for a term of office of four years. The Executive Committee may appoint external technical staff or experts, if needed.

³ Each chairman shall represent his standing committee and conduct business in compliance with the relevant provisions of the Internal Organization Regulations (IOR).

⁴ Each chairman shall fix the dates of meetings in collaboration with the General Secretary, ensure that all tasks are carried out and report back to the Executive Committee.

⁵ The Executive Committee and each standing committee, the latter with the approval of the Executive Committee, may, if necessary, set up a bureau and/or sub-committee to settle urgent matters. Any discussions and decisions of the bureau and/or sub-committee shall be reported to the relevant standing committee as soon as it is practicable to do so.

⁶ Each standing committee may propose amendments to the relevant provisions of the Internal Organization Regulations (IOR) that concern its committee.

46. Finance Committee

The Finance Committee shall monitor the financial management and advise the Executive Committee on financial matters and asset management. It shall analyse the budget of FFA and the financial statements prepared by the General Secretary and submit them to the

հաշվետվությունները և դրանք ներկայացնում է Գործադիր կոմիտեի հաստատմանը: Ֆինանսական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երկու անդամից:

47. ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն

ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն կազմակերպում է ՀՖՖ-ի կողմից անցկացվող Ասոցիացիոն ֆուտբոլի, ֆուտզալի և լողափնյա ֆուտբոլի բոլոր մակարդակների առաջնությունները՝ համաձայն սույն Կանոնադրության և ՀՖՖ-ի առաջնությունների համար կիրառելի կանոնակարգերի: ՀՖՖ-ի առաջնությունների կազմակերպչական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

48. Տեխնիկական և զարգացման կոմիտեն

Տեխնիկական և զարգացման կոմիտեն գլխավորապես վերլուծում է ֆուտբոլային մարզումների և ֆուտբոլում տեխնիկական զարգացման հիմնական կողմերը: Կոմիտեն նաև պատասխանատու է ՀՖՖ-ի զարգացման ծրագրերի, համապատասխան ռազմավարություններ մշակելու և առաջարկելու, տվյալ ռազմավարությունները վերահսկելու, ՀՖՖ-ի Անդամներին տրամադրվող աջակցությունը և ծրագրերը վերլուծելու և Գործադիր կոմիտեին զարգացման ընդհանուր բնույթի հարցերով խորհրդատվության տրամադրելու համար: Տեխնիկական և զարգացման կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

49. Մրցավարական կոմիտեն

Մրցավարական կոմիտեն ապահովում է Խաղի կանոնների կիրառումը: Մրցավարական կոմիտեն նշանակում է ՀՖՖ-ի կողմից կազմակերպվող առաջնությունների մրցավարներին, ՀՖՖ-ի աշխատակազմի հետ համագործակցությամբ կազմակերպում է մրցավարական գործընթացները և վերահսկում մրցավարների որակավորման և վերապատրաստման աշխատանքները: Մրցավարական կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և հինգ անդամից:

50. Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեն

Executive Committee for approval. It shall consist of a chairman, a deputy chairman and two members.

47. Organizing Committee for FFA Competitions

The Organizing Committee for FFA Competitions shall organise the competitions of FFA of Association football, futsal and beach soccer at any level within FFA in compliance with the provisions of these Statutes and the regulations applicable to FFA's competitions. It shall consist of a chairman, a deputy chairman and three members.

48. Technical and Development Committee

The Technical and Development Committee shall primarily analyse the basic aspects of football training and technical development in football. It shall also be in charge of FFA's development programmes, devising and proposing appropriate strategies, checking these strategies and analysing the support and programmes provided to the Members of FFA and providing advice to the Executive Committee on development matters in general. It shall consist of a chairman, a deputy chairman and three members.

49. Referees Committee

The Referees Committee shall implement the Laws of the Game. It shall appoint the referees for matches in competitions organised by FFA, organise refereeing matters within FFA in collaboration with the administration of FFA and monitor the education and training of referees. It shall consist of a chairman, a deputy chairman and five members.

50. Committee for Women's Football and Futsal

Կանանց ֆուտբոլի և ֆուտզալի կոմիտեն կազմակերպում է ՀՖՖ-ի կանանց ֆուտբոլի և ֆուտզալի առաջնությունները և զբաղվում է կանանց ֆուտբոլին և ֆուտզալին վերաբերող հարցերով: Կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

51. Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն

¹ Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերին համապատասխան սահմանում է տրանսֆերային տեղափոխությունների կանոնակարգերը և վերահսկում դրանց կատարումը, ինչպես նաև որոշում է ֆուտբոլիստների կարգավիճակը ՀՖՖ-ի տարբեր առաջնություններում: Գործադիր կոմիտեն կարող է հաստատել Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեի իրավասության շրջանակը կարգավորող հատուկ կանոնակարգեր: Ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

² ՀՖՖ-ի, նրա Անդամների, ֆուտբոլիստների, պաշտոնատար անձանց, միջնորդների և արտոնագրված ֆուտբոլային գործակալների մասնակցությամբ Ֆուտբոլիստների կարգավիճակին առնչվող վեճերը լուծվում են Լոզանի Սպորտային արբիտրաժային դատարանի (ԿԱՍ) կողմից՝ որպես վերջին ատյանի՝ համաձայն սույն Կանոնադրության և այլ կիրառելի իրավունքի:

52. Մասսայական ֆուտբոլի կոմիտե

Մասսայական ֆուտբոլի կոմիտեն աջակցում է Տեխնիկական և զարգացման կոմիտեին վերջինիս պարտականությունների իրականացման ընթացքում: Այն հիմնականում տրամադրում է խորհրդատվություն մասսայական ֆուտբոլի հետ կապված հարցերի, մասսայական ֆուտբոլի զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերի և միջոցառումների կազմակերպման վերաբերյալ: Կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

53. Շահառուների կոմիտե

¹ Շահառուների կոմիտեն զբաղվում է ֆուտբոլի հետ կապված բոլոր հարցերով (մասնավորապես, խաղի կառուցվածք, ՀՖՖ-ի, ՀՖՖ-ի անդամների, շահառուների և ՀՖՖ-ի իրավագործության տարածքում գտնվող այլ ֆուտբոլային շահառու խմբերի միջև հարաբերություններ): Այն ընդունում է շահառուների և

The Committee for Women’s Football and Futsal shall organise the women’s football and futsal competitions of FFA and deal with all matters relating to women’s football and futsal. It shall consist of a chairman, a deputy chairman and three members.

51. Players’ Status Committee

¹ The Players’ Status Committee shall set up and monitor compliance with transfer regulations in accordance with the FIFA Regulations on the Status and Transfer of Players and determine the status of Players for the various competitions of FFA. The Executive Committee may approve special regulations governing the Players’ Status Committee’s powers of jurisdiction. The Players’ Status Committee shall consist of a chairman, a deputy chairman and three members.

² Players’ status disputes involving FFA, its Members, Players, Officials, intermediaries and licensed match agents shall be settled in the last instance by the Court of Arbitration for Sport (CAS) in Lausanne in accordance with these Statutes and subject to any applicable law.

52. Grassroots Committee

The Grassroots Committee supports Technical and Development Committee in its functions, mainly by providing advice on grassroots football relating issues, organizing various programs and events aimed to develop grassroots football. It shall consist of a chairman, a deputy chairman and three members.

53. Stakeholders’ Committee

¹ The Stakeholders’ Committee shall deal with all football matters, particularly the structure of the game and the relationships between FFA, its Members, stakeholders, and other football interest groups in the territory of the FFA. It shall accept submissions from stakeholders and interest groups and shall ensure the Executive Committee is aware of all relevant matters.

այլ շահառու խմբերի կողմից ներկայացված տեղեկությունները/փաստաթղթերը և ապահովում է Գործադիր կոմիտեի իրազեկվածությունը բոլոր համապատասխան հարցերի վերաբերյալ:

² Գործադիր կոմիտեի կողմից ճանաչված շահառուներից յուրաքանչյուրը Շահառուների կոմիտեում կարող է ունենալ միայն մեկ ներկայացուցիչ:

54. Բժշկական կոմիտե

¹ Բժշկական կոմիտեն զբաղվում է ֆուտբոլում առկա բժշկական հարցերին առնչվող բոլոր խնդիրներով:

² Բժշկական կոմիտեն բաղկացած է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից:

³ Բժշկական կոմիտեն համակարգում է սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հարցերը, անհրաժեշտության դեպքում ՀՖՖ Գործադիր կոմիտեին է առաջարկում փոփոխություններ ոլորտի զարգացման նպատակով:

55. Ժամանակավոր կոմիտեները

Անհրաժեշտության դեպքում Գործադիր կոմիտեն կարող է ստեղծել հատուկ հարցերով և գործունեության սահմանափակ ժամկետով ժամանակավոր կոմիտեներ: Գործադիր կոմիտեն նշանակում է կոմիտեի նախագահին, փոխնախագահին և անհրաժեշտ թվով անդամներին: Ժամանակավոր կոմիտեների գործառնություններն ու լիազորությունները սահմանվում են Գործադիր կոմիտեի սահմանած հատուկ կանոնակարգերով: Ժամանակավոր կոմիտեներն անմիջականորեն հաշվետու են Գործադիր կոմիտեին:

Է. ԱԿՈՒՄԲԼԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

56. Ակումբների արտոնագրման մարմինները

Ակումբների արտոնագրման մարմինները պատասխանատու են ՀՖՖ-ի իրավասության շրջանակում ակումբների արտոնագրման համակարգի համար՝ ՀՖՖ-ի և ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման կանոնակարգերին համապատասխան:

V. ԱՆԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

² The stakeholders recognized by the Executive Committee may only have one representative each on the Stakeholders' Committee.

54. Medical Committee

¹ The Medical Committee deals with all medical related issues in football.

² The Medical Committee shall consist of a chairman, a deputy chairman and three members.

³ The Medical Committee coordinates the issues of sports medicine and anti-doping control, if necessary, proposes changes to the FFA Executive Committee for the development of the field.

55. Ad-hoc committees

The Executive Committee may, if necessary, create ad-hoc committees for special duties and a limited period of time. The Executive Committee shall appoint a chairman, a deputy chairman and the appropriate number of members. The duties and function are defined in special regulations approved by the Executive Committee. An ad-hoc committee shall report directly to the Executive Committee.

G. CLUB LICENSING BODIES

56. Club licensing bodies

The Club licensing bodies are in charge of the club licensing system within FFA in accordance with the club licensing regulations of FFA and UEFA.

V. INDEPENDENT COMMITTEES

57. Ինստիտուցիոնալ անկախությունը

¹ Անկախ կոմիտեները և դրանց կազմում ընդգրկված անդամներն իրենց գործառնություններն և լիազորություններն իրականացնելիս գործում են ամբողջովին անկախ և մշտապես ի շահ ՀՖՖ-ի՝ սույն Կանոնադրությանը և ՀՖՖ-ի այլ կանոնակարգերին համապատասխան:

² Անկախ կոմիտեների նախագահները, փոխնախագահներն ու անդամները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները չեն կարող ՀՖՖ-ում, ՀՖՖ-ի որևէ մարմնի կազմում, որևէ Լիգայում կամ Ակումբում (ներառյալ դրանց հետ փոխկապակցված որևէ ընկերությունում/կազմակերպությունում) որևէ գործադիր պաշտոն զբաղեցնել (կամ իրենց առաջին պաշտոնավարման ժամկետին նախորդող չորս տարվա ընթացքում զբաղեցրած լինել), ինչպես նաև ստանալ (այդ թվում՝ իրենց առաջին պաշտոնավարման ժամկետին նախորդող չորս տարվա ընթացքում) որևէ ֆինանսական փոխհատուցում ՀՖՖ-ից, ՀՖՖ-ի որևէ մարմնից, որևէ Լիգայից կամ Ակումբից (ներառյալ՝ դրանց հետ փոխկապակցված որևէ ընկերությունից /կազմակերպությունից): «Ընտանիքի անդամ» է համարվում տվյալ անձի ամուսինը կամ նույն հարկի տակ ապրող կողակիցը, ծնողները, ծնողների ծնողները, հորեղբայրներն ու քեռիները, հորաքույրերն ու մորաքույրերը, զավակները (ներառյալ խորթ կամ որդեգրյալ երեխաները), թոռները, զավակի ամուսինը/կինը, ամուսնու/կնոջ ծնողները և բոլոր նրանք, ում հետ տվյալ անձն արյունակցական կամ այլ կապով պայմանավորված ընտանեկան հարաբերություններին նման հարաբերություններ ունի, ինչով պայմանավորված անձը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում այդ անձանց:

³ Մինչև ընտրվելը կամ վերընտրվելը անկախ կոմիտեների (բացառությամբ Ընտրական կոմիտեի) նախագահները, փոխնախագահներն ու անդամները անցնում են համապատասխանության ստուգում Ընտրական կոմիտեի կողմից՝ սույն Կանոնադրության և Ընտրական կանոնակարգի դրույթների համաձայն:

58. Աուդիտի և համապատասխանության կոմիտե (վերստուգող մարմին)

¹ Աուդիտի և համապատասխանության կոմիտեն ՀՖՖ-ի վերստուգող մարմինն է, որն ապահովում է ֆինանսական հաշվապահության ամբողջականությունը և ճշգրտությունը, ստուգում է ֆինանսական

57. Institutional independence

¹ The independent committees as well as their individual members shall conduct their activities and perform their duties entirely independently but always in the interests of FFA and in accordance with the Statutes and regulations of FFA.

² The chairpersons, deputy chairpersons, and members of the independent committees as well as any of their immediate family members may not exercise or have exercised during the four years preceding their initial terms any executive function at FFA, one of FFA's Members, a League or a Club (including any of their affiliated companies/organizations), nor receive or have received in the four years preceding their initial term any financial remuneration from FFA, one of FFA's Members, a League or a Club (including any of their affiliated companies/organizations). "Immediate family member" shall mean, with respect to a person, such person's spouse or domestic partner, parents, grandparents, uncles, aunts, children (including any stepchild or adopted child), grandchildren, son-, daughter-, father- or mother-in-law, and including anyone else, whether by blood or otherwise, with whom the individual has a relationship akin to a family relationship for which such person provides financial support.

³ The chairpersons, deputy chairpersons, and members of the independent committees (with the exception of the Electoral Committee) shall undergo an integrity check to be conducted by the Electoral Committee in accordance with the provisions of these Statutes and of the Electoral Code prior to their election or re-election

58. Audit and Compliance Committee (controlling body)

¹ The Audit and Compliance Committee is the controlling body of FFA that shall ensure the completeness and reliability of the financial accounting and review the financial statements, the consolidated financial

հաշվետվությունները, ամփոփ ֆինանսական հաշվետվությունը և անկախ աուդիտորների զեկույցները: Աուդիտի և համապատասխանության կոմիտեն կազմված է նախագահից, փոխնախագահից և երեք անդամից: Կոմիտեի անդամները պետք է լինեն ֆինանսական և/կամ կանոնակարգման ու իրավական հարցերում բանիմաց և փորձառություն ունեցող մասնագետներ: Նրանք չեն կարող ընդգրկվել որոշումների կայացման որևէ գործընթացում, որը կարող է ազդեցություն ունենալ ՀՖՖ-ի գործունեության վրա:

² Աուդիտի և համապատասխանության կոմիտեն տրամադրում է խորհրդատվություն, աջակցում և վերահսկում է Գործադիր կոմիտեին՝ ՀՖՖ-ի ֆինանսական և համապատասխանության հարցերը մշտադիտարկելիս և ապահովում ու մշտադիտարկում է ՀՖՖ-ի կանոնակարգերին համապատասխանությունը: Կոմիտեն նաև հսկողություն է իրականացնում գլխավոր քարտուղարության նկատմամբ՝ ֆինանսական և համապատասխանության հարցերով: Աուդիտի և համապատասխանության կոմիտեն ապահովում է ֆինանսական հաշվապահության ամբողջականությունը և ճշգրտությունը, ստուգում է ֆինանսական հաշվետվությունները, ամփոփ ֆինանսական հաշվետվությունը և անկախ աուդիտորների զեկույցները: Կոմիտեն նաև վերահսկում է ՀՖՖ-ի ֆինանսական և համապատասխանության հետ կապված հարցերը և ՀՖՖ-ի համապատասխան մարմիններին առաջարկում է ձեռնարկել վերահսկողության արդյունքում անհրաժեշտ ճանաչված գործողություններ: Աուդիտի և համապատասխանության կոմիտեն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ վերստուգող մարմնի իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

³ Աուդիտի և համապատասխանության կոմիտեի լիազորությունների մանրամասները, դրա ներքին համագործակցությանն առնչվող և այլ ընթացակարգային հարցերը սահմանվում են Ներքին կազմակերպական կանոնակարգով (ՆԿԿ):

⁴ Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը, փոխնախագահը և անդամներն ընտրվում են Ժողովի կողմից չորս տարի ժամկետով և կարող են ազատվել իրենց լիազորությունների կատարումից միայն Ժողովի որոշմամբ: Նրանք ՀՖՖ-ի այլ մարմնի անդամ չեն կարող լինել: Միայն Նախագահը և նա մեկ անդամ պետք է համապատասխանեն 57-րդ կետի 2-րդ

statement and the external auditors' reports. The Audit and Compliance Committee shall consist of a chairman, a deputy chairman and three members. The committee members shall be knowledgeable and experienced in financial and/or regulatory and legal matters and may not be involved in any decision affecting the operations of FFA.

² The Audit and Compliance Committee shall advise, assist and oversee the Executive Committee in monitoring FFA's financial and compliance matters, and issue and monitor compliance with the relevant regulations of FFA. It shall also supervise the general secretariat in financial and compliance issues. The Audit and Compliance Committee shall ensure the completeness and reliability of the financial accounting and review the consolidated financial statements and the independent and external auditor's report. The committee shall furthermore monitor FFA's financial and compliance matters and suggest to the appropriate FFA bodies any action that it deems necessary as a result of such monitoring. The Audit and Compliance Committee is responsible for other functions submitted to the competence of the controlling body under the laws of the Republic of Armenia.

³ Details on the Audit and Compliance Committee's responsibilities, its internal cooperation and other procedural matters are stipulated in the Internal Organization Regulations (IOR) of FFA.

⁴ The chairman, deputy chairman and members of the Audit and Compliance Committee shall be elected by the Assembly for a period of four years and may only be relieved of their duties by the Assembly. They shall not belong to any other body of FFA. Only the chairman and one other member are required to fulfil the independence requirements set out in clause 57 par. 2 above.

ենթակետով սահմանված անկախության պահանջներին:

⁵ Եթե Աուդիտի և համապատասխանության կոմիտեի նախագահը, փոխնախագահը կամ որևէ անդամ պաշտոնավարման ընթացքում դադարեցնում է իր պաշտոնական գործունեությունը, ապա Գործադիր կոմիտեն նշանակում է փոխարինող, ով պաշտոնավարում է մինչև հաջորդ Ժողովի գումարումը, որի ժամանակ ընտրվում է նոր նախագահ, փոխնախագահ կամ անդամ:

59. Ընտրական կոմիտե

¹ Ընտրական կոմիտեն, ՀՖՖ-ի Ընտրական կանոնակարգին համապատասխան, ընտրական գործընթացների կազմակերպման և վերահսկման համար պատասխանատու մարմինն է: Ընտրական կոմիտեի որոշումների դեմ բողոքները քննվում են Բողոքարկման կոմիտեի կողմից:

60. Իրավական մարմիններ

¹ ՀՖՖ-ի կառուցվածքային ստորաբաժանումներ հանդիսացող իրավական մարմիններն են.

ա) Կարգապահական և էթիկայի կոմիտեն,

բ) Բողոքարկման կոմիտեն,

գ) Վեճերի լուծման պալատը:

² Իրավական մարմինները կազմված են նախագահից, փոխնախագահից և որոշակի թվով անդամներից:

³ Իրավական մարմինները պետք է ձևավորվեն այնպես, որ անդամները միասնաբար ունենան իրենց խնդիրները պատշաճ կատարելու համար անհրաժեշտ գիտելիք, կարողություններ և մասնագիտական փորձ: Իրավական մարմինների նախագահները պետք է իրավաբանական գործունեության համար անհրաժեշտ որակավորում ունենան:

⁴ Իրավական մարմինների բոլոր անդամները պաշտոնավարման ժամկետը չորս տարի է: Անդամները կարող են վերընտրվել կամ ցանկացած պահի ազատվել իրենց լիազորությունների իրականացումից: Լիազորությունների իրականացումից կարող է ազատել միայն Ժողովը:

⁵ If the chairman, the deputy chairman or a member of the Audit and Compliance Committee permanently ceases to perform his official function during his term of office, the Executive Committee shall appoint a replacement to serve until the next Assembly, in which the Assembly elects a new replacement for the remaining period.

59. Electoral committee

¹ The electoral committee is the body in charge of organizing and supervising the election process in accordance with the Electoral Code of FFA. The Appeal Committee shall hear appeals against the decisions of the Electoral Committee.

60. Judicial bodies

¹ The judicial bodies being structural subdivisions of FFA are:

a) the Disciplinary and Ethics Committee;

b) the Appeal Committee;

c) The Dispute Resolution Chamber.

² The judicial bodies shall consist of a chairman, a deputy chairman and a specific number of other members.

³ The judicial bodies are to be composed in such a way that the members, together, have the knowledge, abilities and specialist experience that is necessary for the due completion of their tasks. The chairmen of the judicial bodies shall be qualified to practise law.

⁴ The term of office of all members shall be four years. The members may be re-elected or relieved of their duties at any time, although they may only be relieved of their duties by the Assembly.

⁵ Իրավական մարմինների նախագահները, փոխնախագահները և մյուս անդամներն ընտրվում են Ժողովի կողմից՝ Գործադիր կոմիտեի առաջարկությամբ և չեն կարող ՀՖՖ-ի որևէ այլ մարմնի անդամ լինել:

⁶ Եթե որևէ իրավական մարմնի նախագահ, փոխնախագահ կամ անդամ պաշտոնավարման ժամկետի ընթացքում դադարեցնում է իր պաշտոնական գործունեությունը, ապա Գործադիր կոմիտեն նշանակում է մինչև հաջորդ Ժողովը պաշտոնավարող փոխարինող: Հաջորդ Ժողովը նշանակում է տվյալ իրավական մարմնի նոր անդամին՝ մնացյալ ժամկետով պաշտոնավարելու համար:

⁷ Իրավական մարմինների գործառույթներն ու լիազորությունները սահմանվում են ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կանոնակարգով:

⁸ Սույն կետով սահմանված դրույթները կիրառելի չեն Վեճերի Լուծման Պալատի նկատմամբ, որը գործում է իր կանոնակարգի համաձայն:

61. Կարգապահական և էթիկայի կոմիտեն

¹ Կարգապահական և էթիկայի կոմիտեի գործառույթները սահմանվում են ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգով: Կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավագործ է որոշումներ ընդունել, եթե միայն կոմիտեի անդամներից առնվազն երեքը ներկա են կոմիտեի նիստին: Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված որոշակի դեպքերում կոմիտեի նախագահը կարող է միանձնյա որոշումներ կայացնել:

² Կարգապահական և էթիկայի կոմիտեն իրավասու է սույն Կանոնադրությամբ և ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված պատժամիջոցներ կիրառել Անդամների, Պաշտոնատար անձանց, Ֆուտբոլիստների, Ակումբների, արտոնագրված խաղերի գործակալների և միջնորդների նկատմամբ:

³ Վերը նշված դրույթները չեն ազդում Անդամների անդամության կասեցման և հեռացման մասով Ժողովի և Գործադիր կոմիտեի իրավասությունների վրա:

⁴ Գործադիր կոմիտեն հաստատում է ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգը, որը պետք է համապատասխանի ՖԻՖԱ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգով սահմանված սկզբունքներին:

⁵ The chairmen, deputy chairmen and other members of the judicial bodies shall be elected by the Assembly upon proposal of the Executive Committee and shall not be members of any other body of FFA.

⁶ If the chairman, the deputy chairman or a member of a judicial body permanently ceases to perform his official function during his term of office, the Executive Committee shall appoint a replacement to serve until the next Assembly, in which the Assembly shall appoint a new member of the respective judicial body for the remaining period.

⁷ The responsibilities and function of the judicial bodies shall be stipulated in the Disciplinary and Ethics Code of FFA.

⁸ The procedure herein shall not apply to the Dispute Resolution Chamber which shall operate according to its regulations.

61. Disciplinary and Ethics Committee

¹ The function of the Disciplinary and Ethics Committee shall be governed by the Disciplinary and Ethics Code of FFA. The Disciplinary and Ethics Committee shall pass decisions only when at least three members are present. In certain cases, as specified in the Disciplinary and Ethics Code, the chairman may rule alone.

² The Disciplinary and Ethics Committee may pronounce the sanctions described in these Statutes and the Disciplinary and Ethics Code of FFA on Members, Officials, Players, Clubs, licensed match agents and intermediaries.

³ These provisions do not affect the powers of the Assembly and the Executive Committee with regard to the suspension and expulsion of Members.

⁴ The Executive Committee shall issue the Disciplinary and Ethics Code of FFA, which shall be in accordance with the principles laid down in the FIFA Disciplinary Code and the FIFA Code of Ethics.

62. Բողոքարկման կոմիտեն

¹ Բողոքարկման կոմիտեի գործառնությունները սահմանվում են ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կանոնակարգով: Բողոքարկման կոմիտեն իրավագոր է որոշումներ ընդունել, եթե միայն կոմիտեի անդամներից առնվազն երեքը ներկա են կոմիտեի նիստին: Համապատասխան կանոնակարգերով սահմանված որոշակի դեպքերում կոմիտեի նախագահը կարող է միանձնյա որոշումներ կայացնել:

² Բողոքարկման կոմիտեն քննում է Կարգապահական և էթիկայի կոմիտեի այն որոշումների դեմ ներկայացված բողոքները, որոնք ՀՖՖ-ի համապատասխան կանոնակարգերով վերջնական որոշումներ չեն համարվում: Բողոքարկման կոմիտեն քննում է նաև Ընտրական կոմիտեի որոշումների դեմ բերված բողոքները:

³ Բողոքարկման կոմիտեի որոշումները կարող են բողոքարկվել միայն ԿԱՍ-ում՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

63. Վեճերի լուծման պալատ

¹ Վեճերի լուծման պալատը՝ ակումբի և Ֆուտբոլիստի միջև աշխատանքային կամ պայմանագրային հարաբերություններից բխող, ինչպես նաև միևնույն Ասոցիացիայի Ակումբների միջև մարզումային փոխհատուցման և համերաշխության մեխանիզմի հետ կապված վեճերը լուծող մարմին է:

² Վեճերի լուծման պալատի կազմը, իրավասությունները և վարույթի կանոնները սահմանվում են Գործադիր կոմիտեի կողմից ընդունվող առանձին կանոնակարգերով:

³ ՀՖՖ-ի, ՀՖՖ-ի Անդամների, ֆուտբոլիստների, պաշտոնատար անձանց, մրցախաղի ներկայացուցիչների, ֆուտբոլային միջնորդների և խաղերի գործակալների միջև առաջացած ցանկացած վեճ, ինչպես նաև Վեճերի լուծման պալատի կողմից ընդունված որոշումների դեմ ներկայացված ցանկացած

62. Appeal Committee

¹ The function of the Appeal Committee shall be governed by the Disciplinary and Ethics Code of FFA. The Appeal Committee shall pass decisions only when at least three of the members are present. In certain cases, as specified in the relevant regulations, the chairman may rule alone.

² The Appeal Committee is responsible for hearing appeals against decisions from the Disciplinary and Ethics Committee that are not declared final by the relevant regulations of FFA. The Appeal Committee shall also hear appeals against decisions of the Electoral Committee.

³ Decisions pronounced by the Appeal Committee may only be appealed to CAS in accordance with the provisions in these Statutes.

63. Dispute Resolution Chamber

¹ The Dispute Resolution Chamber is a body that resolves disputes between a Club and a Player in relation to employment or contractual stability, as well as disputes between Clubs belonging to the same Association in relation to training compensation and the solidarity mechanism.

² The composition, jurisdiction and procedural rules of the Dispute Resolution Chamber shall be laid down in separate regulations issued by the Executive Committee.

³ Any dispute between the FFA, FFA members, players, officials, and representatives of the game, players, match agents and intermediaries, as well as any appeal against decisions of the Dispute Resolution Chamber shall be resolved as last instance by CAS.

բողոք ենթակա է լուծման ԿԱՄ-ի կողմից՝ որպես վերջին ատյան:

VI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

64. Կարգապահական միջոցները

ՀՖՖ-ի իրավական մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում իրավասու են կիրառելու հետևյալ կարգապահական միջոցները.

¹ Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար.

- ա) նախազգուշացում.
- բ) նկատողություն.
- գ) տուգանք.
- դ) պարգևների վերադարձ:

² Ֆիզիկական անձանց համար.

- ա) զգուշացում.
- բ) հեռացում.
- գ) որակազրկում խաղի մասնակցությունից.
- դ) արգելք հանդերձարան մտնելու և/կամ պահեստայինների նստարանին նստելու.
- ե) արգելք մարզադաշտ մուտք գործելու.
- զ) արգելք մասնակցելու ցանկացած տիպի ֆուտբոլային գործունեության.
- է) սոցիալական աշխատանք.
- ը) համապատասխանության դասընթաց:

³ Իրավաբանական անձանց համար.

- ա) արգելք տրանսֆերային տեղափոխություն իրականացնելու.
- բ) խաղի անցկացում առանց հանդիսատեսի.
- գ) խաղի անցկացում չեզոք դաշտում.
- դ) խաղի անցկացման արգելք որոշակի մարզադաշտում.
- ե) խաղի արդյունքների անվավեր ճանաչում.
- զ) հեռացում մրցաշարից.
- է) տեխնիկական պարտություն.
- ը) միավորների նվազեցում.
- թ) իջեցում ավելի ցածր դիվիզիոն (առաջնություն).
- ժ) խաղի վերախաղարկում:

VII. ԱՐԲԻՏՐԱԺ

65. Արբիտրաժ

VI. DISCIPLINARY MEASURES

64. Disciplinary Measures

Within the limits of their authority, the FFA Judicial bodies may apply the following judicial sanctions:

¹ For natural and legal persons:

- a) a warning;
- b) a reprimand;
- c) a fine;
- d) the return of awards.

² For natural persons:

- a) a caution;
- b) an expulsion;
- c) a match suspension;
- d) a ban from the dressing rooms and/or the substitutes' bench;
- e) a ban from entering a stadium;
- f) a ban on taking part in any football-related activity;
- g) social work;
- h) compliance training.

³ For legal persons:

- a) a transfer ban;
- b) playing a match without spectators;
- c) playing a match on neutral territory;
- d) a ban on playing in a particular stadium;
- e) annulment of the result of the match;
- f) exclusion from a competition;
- g) a defeat by forfeit;
- h) deduction of points;
- i) relegation to a lower division;
- j) replaying a match.

VII. ARBITRATION

65. Arbitration

¹ ՀՖՖ-ի կազմում կամ Անդամներից որևէ մեկի, Լիգաների, Լիգաների անդամների, Ակումբների, Ակումբների անդամների, խաղացողների և Պաշտոնատար անձանց մասնակցությամբ ցանկացած վեճ՝ ենթակա է լուծման ԿԱՍ-ի կողմից միայն որպես վերջին ատյան (այսինքն՝ վեճի լուծման ՀՖՖ-ի ներքին բոլոր միջոցները սպառելուց հետո), որը կլուծի վեճը՝ առանց վեճն Դատարանի քննությանը հանձնելու, եթե դա արգելված չէ ՀՀ օրենսդրությամբ:

² Միջազգային մրցաշարերի հարթությանն առնչվող ցանկացած վեճ, որը բխում է ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի Կանոնադրություններից, կանոնակարգերից, կարգադրություններից և որոշումներից, կամ առնչվում է դրանց, ենթակա է լուծման ԿԱՍ-ի կողմից միայն որպես վերջին ատյան (այսինքն՝ վեճի լուծման ՀՖՖ-ի ներքին բոլոր միջոցները սպառելուց հետո)՝ ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կանոնադրությունների համապատասխան դրույթներով սահմանված կարգով:

66. Իրավասությունը

¹ ՀՖՖ-ի իրավասությունը տարածվում է ներքին՝ ազգային հարթության վեճերի վրա, ինչպես օրինակ ՀՖՖ-ի ենթակայության տակ գտնվող կողմերի միջև ծագած վեճերը:

² ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի իրավասությունը տարածվում է միջազգային հարթության վեճերի վրա, ինչպես օրինակ տարբեր Ասոցիացիաների և/կամ Կոնֆեդերացիաների ենթակայության տակ գտնվող կողմերի միջև ծագած վեճերը:

³ ՀՖՖ-ն պարտավորվում է ապահովել իր և իր իրավասությանը ենթակա բոլոր անձանց/մարմինների կողմից ՖԻՖԱ-ի մարմնի, ՈՒԵՖԱ-ի մարմնի կամ ԿԱՍ-ի ցանկացած վերջնական որոշման կատարումը:

VIII. ՖԻՆԱՆՍՆԵՐ

67. Ֆինանսական ժամանակաշրջան

¹ ՀՖՖ-ի ֆինանսական ժամանակաշրջանը մեկ տարի է, որը մեկնարկում է հունվարի 1-ին և ավարտվում դեկտեմբերի 31-ին:

² ՀՖՖ-ի եկամուտները և ծախսերը պետք է հաշվեկշռվեն տվյալ ֆինանսական ժամանակաշրջանի վերջում:

¹ Disputes within FFA or disputes affecting Members, leagues, members of leagues, Clubs, members of Clubs, players and officials may only be referred in the last instance (i.e. after exhaustion of all internal channels within FFA) to CAS, which shall settle the dispute definitively to the exclusion of any Ordinary court, unless expressly prohibited by the legislation in Armenia.

² Disputes of international dimension arising from or related to the Statutes, regulations, directives and decisions of FIFA or UEFA may only be submitted in the last instance (i.e. after exhaustion of all internal channels) to CAS as specified in the Statutes of FIFA and of UEFA.

66. Jurisdiction

¹ FFA shall have jurisdiction on internal national disputes, i.e. disputes between parties belonging to FFA.

² FIFA and UEFA shall have jurisdiction on international disputes, i.e. disputes between parties belonging to different Associations and/or Confederations.

³ FFA shall ensure its full compliance and that of all those subject to its jurisdiction with any final decision passed by a FIFA body, a UEFA body or CAS.

VIII. FINANCE

67. Financial period

¹ The financial period of FFA shall be one year and shall begin on 1 January and end on 31 December.

² The revenue and expenses of FFA shall be managed so that they balance out over the financial period. FFA's

ՀՖՖ-ի հետագա հիմնական պարտավորությունները երաշխավորվում են պահուստային միջոցների ստեղծմամբ:

³Գլխավոր քարտուղարը պատասխանատու է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՖՖ-ի, դրա հիմնարկների և ՀՖՖ-ի մասնակցությամբ սնտեսական ընկերությունների տարեկան համախմբված հաշիվների կազմման համար:

68. Եկամուտները

ՀՖՖ-ի եկամուտները մասնավորապես գոյանում են.

- ա) Անդամների վճարումներից (մուտքավճարներից և տարեկան անդամավճարներից).
- բ) ՀՖՖ-ի նպատակներից բխող այլ անդամավճարներից և ստացված գումարներից.
- գ) Հանգանակություններից, նվիրատվություններից/ նվիրաբերություններից, այդ թվում՝ դրամաշնորհներից.
- դ) իրավասու մարմինների կողմից Անդամների նկատմամբ կիրառված տուգանքներից (այլ պատժամիջոցներից).
- ե) Անդամների ներդրումներից.
- զ) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից.
- է) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցներից.
- ը) ՀՖՖ-ին պատկանող իրավունքների մարքեթինգից.
- թ) պետական բյուջեից դրամական հատկացումներից.
- ժ) ֆուտբոլին առնչվող գործունեության այլ տեսակներից ստացված եկամուտներից.
- ժա) օրենքով չարգելված այլ միջոցներից:

69. Ծախսերը

ՀՖՖ-ն կատարում է.

major duties in the future shall be guaranteed through the creation of reserves.

³The General Secretary is responsible for drawing up the annual consolidated accounts of FFA, its subsidiaries and the commercial companies with FFA participation, as of 31 December of each year.

68. Revenue

The revenue of FFA arises specifically from:

- a) payments of the Members (entrance fees and annual subscriptions);
- b) other subscriptions and receipts arising out of the objectives of FFA;
- c) endowments, donations, including grants;
- d) fines (other sanctions) imposed on the Members by relevant bodies;
- e) contributions of the Members;
- f) assets received from entrepreneurial activity;
- g) assets received from other organizations established by FFA or with FFA participation;
- h) receipts generated by the marketing of rights to which FFA is entitled;
- i) assignments from state budget;
- j) any other revenue related to football activities;
- k) other assets not prohibited by the law.

69. Expenses

FFA bears:

ա) բյուջեով/տարեկան ծախսերի նախահաշվով նախատեսված ծախսերը.

a) the expenses stipulated in the budget/annual cost estimate;

բ) ՀՖՖ-ի առօրյա բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը.

b) the expenses necessary to ensure day-to-day activity of FFA;

գ) Ժողովի հաստատած այլ ծախսերը և Գործադիր կոմիտեի, Նախագահի, Գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների շրջանակներում հաստատված ծախսերը.

c) other expenses approved by the Assembly and expenses that the Executive Committee, the President and the General Secretary are entitled to incur within the scope of their authority;

դ) ՀՖՖ-ի և ֆուտբոլային գործունեությանն առնչվող այլ նպատակներից բխող այլ ծախսեր:

d) all other expenses in keeping with the objectives pursued by FFA and related to football activities.

70. Անկախ աուդիտորները

70. Independent and external auditors

Ժողովի նշանակված անկախ աուդիտորներն իրականացնում են Ֆինանսական կոմիտեի հաստատած հաշիվների տարեկան աուդիտ՝ կիրառելի հաշվապահական սկզբունքներին համաձայն, և համապատասխան զեկույցը ներկայացնում են Ժողովին: Աուդիտորները նշանակվում են 1 տարի ժամկետով: Նրանց մանդատը կարող է երկարաձգվել:

The independent and external auditors appointed by the Assembly shall audit on a yearly basis the accounts approved by the Finance Committee in accordance with the appropriate principles of accounting and present a report to the Assembly. The auditors shall be appointed for a period of 1 year. This mandate may be renewed.

71. Անդամավճարները

71 Membership subscriptions

¹ Անդամավճարները պետք է վճարել ոչ ուշ, քան մինչև տվյալ ֆինանսական տարվա ավարտը: Նոր Անդամների տարեկան անդամավճարները պետք է վճարվեն անդամ դառնալու մասին Ժողովի որոշման կայացումից հետո 30 օրվա ընթացքում:

¹ Membership subscriptions are due prior to the conclusion of the financial year. The annual subscription for new Members for the year in question shall be paid within 30 days of the close of the Assembly at which they are admitted.

² Ժողովը սահմանում է տարեկան անդամավճարի չափն առնվազն յուրաքանչյուր 4 տարին մեկ՝ Գործադիր կոմիտեի առաջարկությամբ: Անդամավճարը պետք է նույնը լինի բոլոր Անդամների համար և պետք է հավասար լինի նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկին:

² The Assembly shall fix the amount of the annual subscription at least every 4 years on the recommendation of the Executive Committee. The amount of annual subscription of the same for all Members and equal to 300-fold the minimal wage.

72. Պարտավորությունների կատարում

72. Settlement

ՀՖՖ-ն իրավասու է պարտագրելու Անդամների հաշիվները և ակտիվները և դրանցից կատարելու պահումներ՝ նրանց նկատմամբ ՀՖՖ-ի պահանջները բավարարելու նպատակով:

FFA may debit any Member's assets and accounts to settle claims.

73. Ֆինանսական տվյալների հրապարակում

73. Publication of financial data

¹ ՀՖՖ-ն պարտավոր է իր պաշտոնական կայքում հրապարակել սույն Կանոնադրության 32-րդ կետի 2-րդ

¹ FFA shall publish on its official website the financial documents referred to under clause 32 par. 2 let. i), j),

ենթակետի «թ», «ժ» և «Ժա» պարբերություններով սահմանված ֆինանսական փաստաթղթերը՝ Ժողովի կողմից դրանց հաստատումից հետո:

² Գործադիր կոմիտեի Անդամների (այդ թվում՝ Նախագահի), Գլխավոր քարտուղարի և անկախ մարմինների անդամների վարձատրության չափը նույնպես պետք է կանոնավոր կերպով հրապարակվի (օրինակ՝ ՀՖՖ-ի պաշտոնական կայքում):

IX. ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

74. Առաջնությունները

¹ ՀՖՖ-ն կազմակերպում և համակարգում է ՀՖՖ-ի իրավասության տարածքում անցկացվող բոլոր պաշտոնական առաջնությունները:

² Գործադիր կոմիտեն իրավասու է ՀՖՖ-ի ենթակայության տակ գործող Լիգաներին (եթե այդպիսին կա) պատվիրակելու կազմակերպել առաջնություններ [օր.՝ Էլիտ ֆուտբոլի առաջնություններ կազմակերպելու մասին համապարփակ համաձայնագրով]: Լիգաների կազմակերպած առաջնությունները չպետք է խոչընդոտեն ՀՖՖ-ի կողմից կազմակերպված առաջնություններին: Առաջնահերթությունը տրվում է ՀՖՖ-ի կողմից կազմակերպված առաջնություններին:

³ Գործադիր կոմիտեն կարող է սահմանել առաջնությունների անցկացման հատուկ կանոնակարգեր:

75. Ակումբների արտոնագրումը

ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն սահմանում է ակումբների արտոնագրման համակարգի համապատասխան կանոնակարգերը, որոնք սահմանում են ՀՖՖ-ի առաջնություններին Ակումբների մասնակցության կարգը՝ ՈՒԵՖԱ-ի հաստատած Ակումբների արտոնագրման կանոնակարգերին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան:

76. Իրավունքները

¹ ՀՖՖ-ն և Անդամները առաջնությունների և իրենց իրավասության ներքո կազմակերպող այլ միջոցառումների կազմակերպումից և անցկացումից

and k) of these Statutes once the relevant items have been approved by the Assembly.

² The remuneration of the members of the Executive Committee (including the President), the General Secretary and the members of the independent bodies shall also be made publicly available (e.g., through the official website of FFA) on a regular basis.

IX. COMPETITIONS AND RIGHTS IN COMPETITIONS AND EVENTS

74. Competitions

¹ FFA organises and coordinates all official competitions held within its territory.

² The Executive Committee may delegate to FFA's subordinate Leagues (if applicable) the authority to organise competitions [e.g. by means of a proper and comprehensive agreement for elite football]. The competitions organised by the Leagues shall not interfere with those competitions organised by FFA. Competitions organised by FFA shall take priority.

³ The Executive Committee may issue special regulations to this end.

75. Club licensing

The Executive Committee of FFA shall issue regulations regarding a club licensing system governing the participation of Clubs in the competitions of FFA, in compliance with the minimum requirements of the club licensing system as set up by UEFA.

76. Rights

¹ FFA and Members are the original owners of all of the rights emanating from competitions and other events coming under their respective jurisdiction, without any

բխող բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերն են՝ առանց որևէ բովանդակային, ժամկետային կամ տարածքային սահմանափակման: Այդ իրավունքները ներառում են, ի թիվս այլնի, ֆինանսական իրավունքները, տեսալսողական և ռադիոձայնագրման իրավունքները, վերարտադրման և հեռարձակման իրավունքները, մուլտիմեդիային առնչվող իրավունքները, մարքեթինգային և գովազդի իրավունքները, ինչպես նաև ոչ նյութական սեփականության (օր.՝ խորհրդանիշները) և հեղինակային իրավունքից բխող իրավունքները:

² Գործադիր կոմիտեն իրավասու է որոշելու նշված իրավունքների իրացման կարգը և շրջանակները և այդ նպատակով իրավասու է ընդունելու կանոնակարգեր:

77. Լիազորում

ՀՖՖ-ն և Անդամները բացառիկ իրավունք ունեն իրենց իրավասության ներքո կազմակերպվող առաջնությունների և այլ միջոցառումների տեսա և ձայնա և այլ միջոցներով հեռարձակման իրավունք տալու՝ առանց որևէ սահմանափակման:

X. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱԽԱՂԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ

78. Միջազգային մրցախաղերը և առաջնությունները

¹ Հավաքական թիմերի, Լիգաների և/կամ ակումբային թիմերի և/կամ նորաստեղծ, հատուկ նպատակով ստեղծված թիմերի միջև միջազգային մրցախաղերի և առաջնությունների կազմակերպումը ՖԻՖԱ-ի, համապատասխան Կոնֆեդերացիայ(ներ)ի և/կամ Ասոցիացիայ(ներ)ի բացառիկ իրավասությունն է: Այդպիսի մրցախաղ կամ առաջնություն չի կարող անցկացվել առանց ՖԻՖԱ-ի, համապատասխան Կոնֆեդերացիայ(ներ)ի և/կամ Ասոցիացիայ(ներ)ի նախօրոք տրված թույլտվության՝ համաձայն ՖԻՖԱ-ի Միջազգային մրցախաղերի կանոնակարգերի:

² ՀՖՖ-ն պարտավոր է առաջնորդվել ՖԻՖԱ-ի կողմից կազմված միջազգային մրցախաղերի օրացույցով:

restrictions as to content, time and place. These rights include, among others, every kind of financial rights, audio-visual and radio recording, reproduction and broadcasting rights, multimedia rights, marketing and promotional rights and incorporeal rights such as symbols and rights arising under copyright law.

² The Executive Committee shall decide how and to what extent these rights are utilised and draw up special regulations to this end.

77. Authorization

FFA and Members are exclusively responsible for authorizing the distribution of image and sound and other data carriers of football matches and events coming under their respective jurisdiction, and without any restrictions.

X. INTERNATIONAL MATCHES AND COMPETITIONS

78. International matches and competitions

¹ The authority for organizing international matches and competitions between representative teams and between Leagues, Club teams and/or scratch teams lies solely with FIFA, the Confederation(s) and/or the Association(s) concerned. No such match or competition shall take place without the prior permission of FIFA, the Confederation(s) and/or the Association(s) concerned in accordance with the FIFA Regulations Governing International Matches.

² FFA is bound to comply with the international match calendar compiled by FIFA.

79. Կապերի հաստատումը

ՀՖՖ-ն, Անդամները, Ֆուտբոլիստները, արտոնագրված ֆուտբոլային գործակալները և միջնորդներն իրավունք չունեն մրցախաղեր անցկացնել կամ սպորտային կապեր հաստատել ՖԻՖԱ-ի անդամ չհանդիսացող Ասոցիացիաների կամ որևէ Կոնֆեդերացիայի ժամանակավոր անդամների հետ՝ առանց ՖԻՖԱ-ի թույլտվության:

80. Հաստատում

¹ ՀՖՖ-ի հետ փոխկապակցված Ակումբները, Լիգաները և Ակումբների այլ խմբերը կարող են միանալ որևէ այլ Ասոցիացիայի միայն ՀՖՖ-ի, մյուս Ասոցիացիայի, համապատասխան Կոնֆեդերացիայ(ներ)ի և ՖԻՖԱ-ի թույլտվությամբ:

² ՀՖՖ-ի հետ կապակցված Ակումբները, Լիգաները և Ակումբների այլ խմբերը չեն կարող մասնակցել այլ Ասոցիացիայի տարածքում կազմակերպվող առաջնություններին առանց ՀՖՖ-ի, մյուս Ասոցիացիայ(ներ)ի, համապատասխան Կոնֆեդերացիայ(ներ)ի և ՖԻՖԱ-ի թույլտվության՝ համաձայն ՖԻՖԱ-ի Միջազգային մրցախաղերի կանոնակարգերի:

XI. ԴՈՊԻՆԳ

81 Դոպինգին առնչվող հարցեր

¹ ՀՖՖ-ն պարտավոր է պայքարել դոպինգի օգտագործման դեմ՝ մարզական էթիկայի նորմերի երաշխավորման, ֆուտբոլիստների ֆիզիկական և հոգեբանական պաշտպանվածության ապահովման, ինչպես նաև մրցաշարերի մասնակիցների համար հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով:

² Դոպինգին առնչվող հարցերում ՀՖՖ-ն գործում է ՖԻՖԱ-ի Հակադոպինգային կանոնակարգի համաձայն:

³ Ազգային կանոնակարգի և ՖԻՖԱ-ի Հակադոպինգային կանոնակարգի միջև ծագած հակասությունները պարագայում՝ զերակայում են ՖԻՖԱ-ի Հակադոպինգային կանոնակարգի դրույթները:

79. Contacts

FFA, Members, Players, Officials, licensed match agents and intermediaries shall not play matches or make sporting contact with Associations that are not members of FIFA or with provisional members of a Confederation without the approval of FIFA.

80. Approval

¹ Clubs, Leagues or any other group of Clubs that are affiliated to FFA may only join another Association with the authorization of FFA, the other Association, the respective Confederation(s) and FIFA.

² Clubs, Leagues or any other group of Clubs that are affiliated to FFA cannot participate in competitions on the territory of another Association without the authorization of FFA, the other Association(s), FIFA and the respective Confederation(s) according to the FIFA Regulations Governing International Matches.

XI. DOPING

81. Doping related matters

¹ FFA shall be committed to the fight against doping use in order to safeguard sporting ethics as well as the physical health and mental integrity of players and to ensure that all participants in sporting competition have equal opportunities.

² In doping related matters FFA acts in accordance with FIFA Anti-Doping Regulations.

³ In the event of any discrepancy between National Regulations and FIFA Anti-Doping Regulations, the provisions set out in FIFA Anti-Doping Regulations shall prevail.

XII. ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

82. Չնախատեսված հանգամանքները և անհատթահարելի ուժի ազդեցությունը («Ֆորս-մաժոր»)

Գործադիր կոմիտեն իրավասու է որոշումներ կայացնելու սույն Կանոնադրությամբ չնախատեսված բոլոր հարցերի վերաբերյալ, ինչպես նաև՝ Ֆորս-մաժորի դեպքում: Այդ որոշումները կայացվում են՝ առաջնորդվելով իրավունքի և արդարության սկզբունքներով՝ ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի համապատասխան կանոնակարգերի համաձայն:

83. Գորպորատիվ փաստաթղթերի հրատարակում

ՀՖՖ-ն պարտավորվում է ապահովել ՀՖՖ-ի գործունեության մասին վերջինիս Անդամների իրազեկվածությունը, մասնավորապես, պարտավորվում է իր պաշտոնական կայքում հրատարակել հետևյալ փաստաթղթերի և տեղեկատվության վերջին խմբագրությունները.

- ա) Կանոնադրությունը և Ժողովի աշխատակարգը,
- բ) Ընտրական կանոնակարգը,
- գ) Կարգապահական և Էթիկայի կանոնակարգը,
- դ) Ներքին կազմակերպական կանոնակարգ,
- ե) կարևոր/առանցքային որոշումները,
- զ) ՀՖՖ-ի ռազմավարությունը,

- է) Գործադիր կոմիտեի նիստերի և Ժողովների օրակարգերը,
- ը) շրջաբերական նամակները,
- թ) հիմնական կանոնակարգերը:

84. Լուծարումը

¹ ՀՖՖ-ի լուծարման մասին որոշումը կայացվում է ՀՖՖ-ի բոլոր Անդամների երեք քառորդ մեծամասնության կողմ քվեարկությամբ, որն անցկացվում է հատուկ այդ նպատակով հրավիրված Ժողովին:

² ՀՖՖ-ի լուծարման դեպքում նրա ակտիվների ճակատագիրը, մինչև Հայաստանում նոր Ասոցիացիայի հիմնադրումը, սահմանվում է Ժողովի որոշմամբ, Անդամների առնվազն երեք քառորդ մեծամասնության կողմ քվեարկությամբ՝ պահպանելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

XII. FINAL PROVISIONS

82. Unforeseen contingencies and force majeure

The Executive Committee shall have the power to decide on all cases of force majeure and on all matters not provided for in these Statutes, such decisions to be made according to right and justice, taking into account the relevant regulations of FIFA and UEFA.

83. Publication of corporate documents

FFA shall ensure that its Members are kept informed of the affairs of FFA, and in particular, shall make publicly available on its official website up-to-date copies of the following documents and information:

- a) Statutes and the Standing Orders of the Assembly;
- b) Electoral Code;
- c) Disciplinary and Ethics Code;
- d) Internal Organization Regulations;
- e) most important/key decisions;
- f) its strategy;
- g) the agenda for Executive Committee meetings and Assemblies;
- h) circular letters;
- j) main regulations.

84. Dissolution

¹ Any decision relating to the dissolution of FFA requires a majority of three-quarters of all of the Members of FFA, which must be obtained at the Assembly specially convened for the purpose.

² If FFA is disbanded, the future of its assets and the establishment of a new Association in Armenia shall be defined by the decision of the Assembly passed by the vote of a majority of three-quarters of the Members of FFA, according to the requirements of the current legislation of the Republic of Armenia

85. Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնադրությունն ընդունվել է Ժողովի կողմից 2021թ. հունիսի 28-ին և ուժի մեջ է մտնում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: ՀՖՖ-ի նախկին Կանոնադրությունը փոխարինվում է սույն Կանոնադրությամբ:

86. Անցումային դրույթներ

¹ Սույն Կանոնադրության 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված Անդամները պետք է ապահովեն սույն Կանոնադրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանությունը 12-ամսյա ժամկետում՝ սկսած ՀՖՖ-ի՝ սույն խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման օրվանից:

² Մինչև սույն խմբագրությամբ Կանոնադրության ուժի մեջ մտնելը ՀՖՖ-ի Անդամ հանդիսացած իրավաբանական անձանց, որոնք չեն համապատասխանում սույն Կանոնադրության 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված չափանիշներին, անդամությունը ՀՖՖ-ին դադարում է և այդ իրավաբանական անձինք չեն համարվում ՀՖՖ-ի անդամներ սույն խմբագրությամբ Կանոնադրության ուժի մեջ մտնելու պահից:

³ ՀՖՖ-ի բոլոր մարմինները և կանոնակարգերը և ՀՖՖ-ի գործունեությունը կանոնակարգող մյուս ներքին իրավական ակտերը պետք է համատասխանեցվեն սույն Կանոնադրության պահանջներին կամ ընդունվեն սույն Կանոնադրության համաձայն 12-ամսյա ժամկետում՝ սկսած ՀՖՖ-ի՝ սույն խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման օրվանից:

⁴ ՀՖՖ-ի Նախագահի 2023թ. ընտրություններին 4 տարվա պաշտոնավարման ժամկետը կկրճատվի մինչև 3 տարի, որպեսզի մինչև 2026 թ-ը Գործադիր կոմիտեի անդամների պաշտոնավարման ժամկետները հավասարեցվեն:

85. Enforcement

These Statutes were adopted at the Assembly on June 28, 2021 and will come into force in accordance with the requirements of the RA Civil Code. The former Statutes of FFA are hereby repealed.

86. Transitional provisions

¹ Members as defined in clause 12 par. 1 shall comply with the requirements of these Statutes within 12 months after the date of the state registration of the present edition of the statutes.

² Legal entities which were Members of FFA prior to the entry into force of these Statutes and which do not meet the criteria of clause 12 par. 1 of these Statutes shall be terminated from membership in FFA and no longer be considered members of FFA since the entry into force of the present edition of the Statutes.

³ All regulations and bodies of FFA and other internal legal acts regulating the function of FFA, shall comply with the requirements of these Statutes or shall be adopted in accordance with these Statutes within 12 months after the date of the state registration of the present edition of the statutes.

⁴ For the 2023 election of the President of FFA, the term of four years shall be shortened to three years, in order to bring the terms of all members of the Executive Committee into alignment by 2026.

* * * * *